

Գլուխ XLV

Առարկայական ծրագիր կերպարվեստից և կիրառական արվեստից

Ընդհանուր մաս

ա) Ներածություն

Անձի դաստիարակությունը և ներդաշնակ զարգացումը, ինչը հանդիսանում է դպրոցական կրթության հիմնական նպատակը, անհնար է առանց արվեստի հետ նրա հաղորդակցության: Արվեստի տարբեր բնագավառների ուսումնասիրությունը նրբացնում է նրա ընկալումը և զգացողությունը, երևակայության ունակությունը, զարգացնում է ստեղծագործական մոտեցումը և քննադական մտածողությունը, առանց որոնց չի կարելի պատկերացնել մարդու ցանկացած գործունեություն:

Անձի դաստիարակության-զարգացման համար անհրաժեշտ աշխատանքային գործունեությունը, նոր ուսումնական պլանի համաձայն, ինտեգրված է արվեստի ուսուցման հետ: Այս ինտեգրման հիմք է հանդիսանում կերպարվեստի ուսուցման մեջ կիրառական-դեկորատիվ արվեստի տարրերի ընդգրկումը:

Առարկան դասավանդելիս ուշադրությունը կենտրոնանում է տրամադրվածությունների, վերաբերմունքների, գործնական, ստեղծագործական և հետազոտական-որոնման կարողությունների և հմտությունների զարգացման և գիտելիքի կիրառման վրա:

բ) Կերպարվեստի և կիրառական արվեստի դասավանդման նպատակը և խնդիրները

Կերպարվեստի և կիրառական արվեստի նպատակն է՝

- Աշակերտի ընդգրկումը ստեղծագործական և մեկնաբանական գործունեության մեջ և այս ճանապարհով նրա մոտ գեղեցիկը զգալու և պատկերելու ունակության զարգացումը:
- Արվեստի նմուշներն ընկալելու ունակության ձևավորումը և այդ հողի վրա արվեստի նկատմամբ մշտական հետաքրքրության և սիրո սերմանումը:
- Արվեստի համընդհանուր լեզվի ուսանումը և դրա միջոցով ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին հաղորդակցությունը, աշխարհի միասնականության զգացման ձևավորումը:
- Շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման և կարգավորման կարողությունների և հմտությունների մշակումը:

- Ստեղծագործական գործունեության տեխնիկական միջոցների տիրապետումը և աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Կերպարվեստի և կիրառական արվեստի դասավանդման խնդիրներն են՝

Համապատասխան արժեքների և վերաբերմունքների ձևավորում, արվեստի և աշխատանքային գործունեության հետ կապված կարողությունների և հմտությունների զարգացում և աշակերտներին անհրաժեշտ գիտելիքների հաղորդում, մասնավորապես՝

Արժեքներ և վերաբերմունքներ	Կարողություններ և հմտություններ	Գիտելիք
<p>Հարգանքի զգացողության զարգացում ազգային և համամարդկային մշակույթի, մարդու աշխատանքի նկատմամբ, սատարման և կարեկցանքի ունակության զարգացում, ներողամիտ վերաբերմունքի ձևավորում այլ մարդկանց, տարբերվող կարծիքի և աշխարհայացքների նկատմամբ:</p>	<p>Ստեղծագործական մտածողության և ընկալման ունակության զարգացում, զգայական ոլորտի զարգացում, երևակայության, ճաշակի և քննադատական մտածողության զարգացում, տեսադաշտի, տարածական պատկերացումների, գննելու ունակության, տեսողական հիշողության և ձեռքի շարժման զարգացում, աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորում, հաղորդակցական կարողությունների զարգացում, կերպարվեստում և կիրառական արվեստում գործնական կարողությունների և հմտությունների</p>	<p>Աշխարհի մասին պատկերացման ձևավորում, սեփական և այլոց մշակութային ժառանգությանը ծանոթացում, կերպարվեստի և կիրառական արվեստի լեզվի ուսանում:</p>

	ձեռքբերում:	
--	-------------	--

Առարկայի դերը դպրոցական կրթության ազգային նպատակի իրականացման մեջ

Ժամանակակից դպրոցի նպատակն է այնպիսի անհատի ձևավորումը, որը պատրաստ կլինի ողջ կյանքի ընթացքում հոգալ սեփական զարգացման մասին: Այդպիսի մարդուն պետք է բնորոշ լինի.

1. քննադատական մտածողությունը,
2. հիմնախնդիրները լուծելու կարողությունը,
3. ինքնադրսևորման կարողությունը,
4. ստեղծագործական մտածողությունը,
5. քաղաքացիական գիտակցությունը,
6. հաղորդակցության կարողությունը,
7. հետազոտման-որոնման կարողությունը,
8. ինքնագնահատման և սեփական ուսումնասությունը վարելու կարողությունը:

Կերպարվեստը և կիրառական արվեստը իր ներդրումն է կատարում նման անձնավորության ձևավորման գործում:

1. Քննադատական մտածողություն

Արվեստի դասավանդման գործընթացում երևույթների իմաստավորման և հիմնախնդիրների մեջ ներթափանցման կարողության ձևավորմանը, քննադատական և ստեղծագործական գիտակցության զարգացմանը նպաստում են. ա) աշակերտների կողմից գեղարվեստական գաղափարների առաջադրումը, բ) սեփական և այլոց ստեղծագործության բնութագրումը, գնահատումը և վերլուծությունը, գ) այն դերի գիտակցումը, որ կատարում է ազգային և համաշխարհային մշակույթների ժառանգությունը տարբեր համատեքստում:

2. Հիմնախնդիրները լուծելու կարողություն

Արվեստ դասավանդելիս՝ հիմնախնդիրները լուծելու կարողության զարգացմանը նպաստում են. ա) դասավանդման գործընթացում առաջացած գաղափարների իրացման փորձը, բ) լավագույն արդյունքի հասնելու համար անհրաժեշտ նյութի, գործիքի, պատկերամիջոցների և տեխնիկայի ընտրությունը և արդյունավետ կիրառումը, գ) առաջադրված խնդրի լուծման համար անհրաժեշտ նախաձեռնության և պատասխանատվության դրսևորումը, դ) ստրեսի, հուսալքության և պարտության հաղթահարումը և առաջադրված նպատակին հասնելու հաստատուն ձգտումը:

3. Ինքնադրսևորման կարողություն

Արվեստ դասավանդելու գործընթացում աշակերտի ինքնադրսևորմանը (հայացքներ, գաղափարներ, կենսանախադրյալներ (տրամադրվածություններ), զգացմունքներ) նպաստում են.

- ա) տարբեր գեղարվեստական նյութի և միջոցների յուրացում-տիրապետումը,
- բ) գեղարվեստական ռեսուրսների (նյութի և մեթոդների) կապակցումը ինքնադրսևորման գործընթացի հետ,
- գ) համադասարանցիների գեղարվեստական ստեղծագործություններում որոշակի հայացքների, գաղափարների, տրամադրությունների և զգացմունքների ճանաչումը և դրանց մասին դատողությունը,
- դ) սեփական գեղարվեստական աշխատանքում պատկերված հայացքների, գաղափարների, տրամադրությունների և զգացմունքների մասին դատողությունը:

4. Ստեղծագործական մտածողություն

Արվեստ դասավանդելիս՝ երևույթների նկատմամբ ստեղծագործական մոտեցման կարողության զարգացմանը նպաստում են. օրիգինալ գեղարվեստական գաղափարների առաջադրումը և դրանց իրականացման համար ոչ ստանդարտ ուղիների որոնումը:

5. Քաղաքացիական գիտակցություն

Արվեստ դասավանդելիս՝ հասարակական կյանքին մասնակցելու ցանկության և կարողության, ազգային ինքնագիտակցության զգացման զարգացմանը նպաստում են. դասարանի, դպրոցի և հասարակության մշակութային կյանքում և բարեկեցության մեջ սեփական ներդրում կատարելը, մշակութային ժառանգության և հասարակության առջև սեփական պարտականությունների և պատասխանատվության գիտակցությունը:

6. Հաղորդակցության կարողություն

Արվեստ դասավանդելիս՝ հաղորդակցության կարողության զարգացմանը նպաստում են. ա) սեփական և մյուսների աշխատանքների մասին դատողությունը, վեճը և դիրքորոշման հիմնավորումը, բ) տարբեր միջոցներով (նկարել, գրել, դատողություն) սեփական կարծիքի և զգացմունքների արտահայտումը, գ) խմբային աշխատանքի ժամանակ մյուսների հետ հարաբերությունը, համագործակցությունը և պրոբլեմային հարցերի համաձայնեցումը, դ) քննադատական կարծիքի արտահայտումը և հիմնավորումը:

7. Հետազոտման-որոնման կարողություն

Արվեստ դասավանդելիս՝ տեղեկության հայթայթման և վերլուծության կարողության զարգացմանը նպաստում են. ա) տեղեկության բազմազան աղբյուրների կիրառումը, բ) տեղեկության համադրումը, քննադատական գնահատումը և արդյունավետ կազմակերպումը, գ) տեղեկության կիրառումը սեփական ստեղծագործության, հետազոտման, անկախ կարծիք ձևավորելու և գործնական պլան սահմանելու համար:

8. Ինքնագնահատման և սեփական ուսումնասիրությունը վարելու կարողություն

Արվեստ դասավանդելիս՝ ինքնագնահատման և սեփական ուսումնառությունը վարելու կարողության զարգացմանը նպաստում են. ա) սեփական հնարավորությունների և ձեռքբերումների ճիշտ գնահատումը, բ) սեփական հույզերի իմաստավորումը և դրանց կառավարումը, գ) շարունակաբար (ողջ կյանքի ընթացքում) սովորելու հմտության մշակումը, դ) գործունեությունը ճիշտ և արդյունավետ պլանավորելու կարողությունը, ե) կրթությանը և մասնագիտական աճին նպաստող պայմանների կիրառումը:

Գ) Կերպարվեստի և կիրառական արվեստի դասավանդման աստիճանների բնութագրում

Տարրական աստիճանում արվեստի, որպես ուսումնա-դասիարակչական բնագավառի, մանկավարժական ներուժը սահմանում է նրա իրազնական-տարատեսակային բնույթը: Ցածր դասարանցիների մոտ, ելնելով նրանց տարիքային առանձնահատկություններից, գերակշռում է իրազնական-գործնական մտածողությունը և աշխարհի զգայական ընկալումը, այդ պատճառով նրանց համար կարևոր է խաղի վրա հիմնված ակտիվությունը, ինչին շատ լավ համապատասխանում են արվեստի տարբեր բնագավառների (նկարչություն, երաժշտություն) ուսանման յուրահատկությունները:

Տարրական դպրոցում արվեստի դասավանդումը հիմնականում ծառայում է երեխայի զգայական և մտավոր ոլորտի, աշխատանքային և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Բազային աստիճանում արվեստի բնագավառներից ձեռք բերած գործնական կարողությունները և հմտությունները դեռահասի համար հեշտացնում են սեփական անձի որոնման և ինքնահաստատման գործընթացը: Միննույն ժամանակ, նշանակալիորեն հեշտանում է այն սրված քննադատական վերաբերմունքն աշխարհի նկատմամբ, որը բնորոշ է այս տարիքին, քանզի արվեստի գործը հասկանալու կարողությունն ի նկատի ունի նաև ներողամտություն տարբերվող կարծիքի և աշխարհընկալման նկատմամբ: Արվեստի նմուշը վերլուծելիս՝ գործնական կարողությունների և հմտությունների տիրապետում-զարգացումը ծառայում է դրանում կիրառված գեղարվեստական միջոցների, հեղինակի մտացածի ավելի լավ հասկանալուն: Աշակերտներն իրականացնում են նաև տարբեր տեսակի նախագծեր: Այս ամենը նրանց օգնում է ընտրություն կատարելու գեղագիտական առարկաների խմբերի մեջ (այն հնարավորությունների շրջանակում, ինչը առաջարկում է դպրոցը), որպեսզի X, XI կամ XII դասարաններում ձեռքբերած կարողությունները, հմտությունները և գիտելիքները հետագայում ավելի խորացվեն և ստեղծվեն մասնագիտական հիմքեր:

Միջնակարգ աստիճանում աշակերտը պատրաստ է կատարելու գիտակցված ընտրություն: Այդ ժամանակ նրան հնարավորություն է տրվում, ըստ իր հայեցողության, ընտրել և ուսումնասիրել տարբեր առարկայական խմբերի հետ կապված որևէ առարկա:

դ) Կերպարվեստի և կիրառական արվեստի դասավանդման կազմակերպում

Կերպարվեստը և կիրառական արվեստը նախատեսված է դասավանդել հանրակրթական դպրոցի բոլոր երեք աստիճաններում. տարրական և բազային աստիճաններում՝ պարտադիր (I-IX դասարաններ), իսկ միջնակարգ աստիճանում՝ (X-XII դասարաններ) կամընտրական առարկաների տեսքով:

Կերպարվեստի և կիրառական արվեստի դասավանդմանը I-VII դասարաններում տրվում է շաբաթական 2 ակադեմիական ժամ: VIII-IX դասարաններում առարկան դասավանդվում է մեկ կիսամյակի ընթացքում և դրան հատկացված է շաբաթական 3 ակադեմիական ժամ. VIII դասարանում՝ I, իսկ IX դասարանում՝ II կիսամյակում:

Կերպարվեստի և կիրառական արվեստի դասավանդման ուղղությունների նկարագրություն

Կերպարվեստի և կիրառական արվեստի դասավանդումը, ուսումնական պլանի համաձայն, ծավալվում է երեք ուղղությամբ.

- 1. Ստեղծագործականության և գործնական կարողությունների ու հմտությունների զարգացում**
- 2. Հաղորդակցություն և մեկնաբանություն**
- 3. Արվեստի ընկալում համատեքստում:**

Դասավանդումը բոլոր ուղղությունների շրջանակներում ընթանում է գուգահեռաբար և միմյանց հետ սերտ փոխադարձ կապի մեջ:

1. Ստեղծագործականության և գործնական կարողությունների ու հմտությունների զարգացում

Այս ուղղության շրջանակներում աշակերտները ձեռք են բերում գործնական կարողություններ և հմտություններ, ծանոթանում և տիրապետում են կերպարվեստի և կիրառական արվեստի տարրերին, սկզբունքներին, արտահայտչականության միջոցներին, տարբեր տեխնիկայի, նյութի, գործիքների և ընթացակարգերի:

Աշակերտները զարգացնում են տարբեր մոտիվների ազդեցությամբ առաջացած գաղափարների և մտահղացումների մարմնավորման կարողությունը, ինչի համար կիրառում են երևակայությունը, հույզերը, դիտարկման ունակությունը, նյութի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը և սովորելու գործընթացում ստացած գիտելիքը:

2. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Այս ուղղության շրջանակներում աշակերտները սովորում են հասկանալ և գնահատել արվեստի գործերը, դրանց մասին կարծիք ձևավորել, ընտելանում են

սեփական մտահղացումը վառ և հստակ մեկնաբանելուն և ուրիշի կարծիքն ուշադիր լսելուն, տիրապետում են կոլեկտիվ աշխատելու և դատելու մեթոդներին:

3. Արվեստի ըմբռնում համատեքստում

Այս ուղղության շրջանակներում աշակերտները ծանոթանում են վրաց և համաշխարհային, հին և նոր արվեստի հայտնի նմուշներին և ժողովրդական ստեղծագործության որոշ բնագավառներին, պարզաբանում են դրանց բովանդակությունը և նշանակությունը, կապակցում են դրանք առօրյա իրականության և սեփական փորձի հետ, ծանոթանում են դրանց ստեղծման և գնահատման տարբերվող պատմական, մշակութային, սոցիալական և այլ համատեքստերին:

ե) Գնահատումը կերպարվեստում և կիրառական արվեստում

Գնահատման բաղադրիչներ

Տնային և դասարանային առաջադրանքների բաղադրիչներ

Տնային առաջադրանքներ

Կարող է գնահատվել հետևյալ առաջադրանքների համաձայն.
նյութի հաթայթում, ռեֆերատ, գործնական աշխատանք:

Ընթացիկ դասարանային առաջադրանքներ

Պարունակում են հետևյալ կարգի ակտիվություններ.

1. Կոնկրետ գործնական աշխատանքի կատարում կամ աշխատանքի ստեղծում որոշակի թեմայով, ինչը կարելի է գնահատել հետևյալ չափանիշների համաձայն.

- կազմակերպվածություն (սիստեմայնություն, ժամանակաչափի պահպանում, անհրաժեշտ նյութի, պարագաների առկայություն),
- տեխնիկայի, նյութի տիրապետում,
- ստեղծագործականություն (որոշման անկախ ընդունում, սեփական ձեռագրի, հայեցակարգի ցուցադրում),
- համագործակցություն խմբային աշխատանքի ժամանակ:

2. Մասնակցություն իր և ուրիշների աշխատանքների քննարկմանը

3. Մասնակցություն որոշակի դարաշրջանի, ստեղծագործողի կամ արվեստի նմուշի վերլուծությանը կամ նրա շուրջ դատողությանը , ինչը կարող է գնահատվել հետևյալ չափանիշների համաձայն.

- ակտիվ մասնակցություն,
- սեփական կարծիքի հիմնավորված ներկայացում,
- ուրիշի կարծիքի նկատմամբ հարգանքի ցուցադրում:

4. Մեփական և այլոց աշխատանքների շնորհանդես (լսարանին ներկայացնել), ինչը կարող է գնահատվել հետևյալ չափանիշների համաձայն.

- ասելիքի պարզ և հասկանալի հաղորդում, կապ լսարանի հետ,
- դիտողականության և տեխնիկական միջոցների կիրառում,
- հարցերին համարժեք պատասխան տալ:

Ամփոփիչ առաջադրանքների բաղադրիչ

Ամփոփիչ առաջադրանքի բաղադրիչը կապվում է ուսանում-ուսուցման արդյունքի հետ: Այս բաղադրիչում պետք է գնահատվեն մեկ ուսումնական հատվածի (թեմա, գլուխ, պարագրաֆ, հարց) սովորել-մշակելու արդյունքում ստացած արդյունքները: Կոնկրետ ուսումնական միավորն ավարտելիս՝ աշակերտը պետք է կարողանա դրսևորել կերպարվեստից և կիրառական արվեստից չափորոշչով սահմանված գիտելիք և կարողություններ: Համապատասխանաբար, հանրագումարող առաջադրանքները պետք է ստուգեն կերպարվեստից և կիրառական արվեստից չափորոշիչներով սահմանված արդյունքները:

Ամփոփիչ առաջադրանքների տեսակներ.

Չափորոշի պահանջները բավարարելու համար, երաշխավորված է կիրառել ամփոփիչ առաջադրանքների բազմազան ձևեր: Կերպարվեստից և կիրառական արվեստից ամփոփիչ առաջադրանքների տեսակներ կարող են լինել.

ստուգողական/քննություն/թեստավորում/մասշտաբային **աշխատանք/**
ցուցահանդես/զեկուցում-ռեֆերատ (որոշակի դարաշրջանի, ստեղծագործողի մասին):

Նախագծեր

Նախագծի ենթադրյալ թեմաներ.

Էքսպոզիցիայի, հեռուստահաղորդման, ռադիոհաղորդման, բեմադրության նախապատրաստում, թերթի, ամսագրի, գրքի մանրակերտի պատրաստում, պուրակի բարեկարգում, դպրոցի, դասասենյակի, ինտերիերի դիզայնի ստեղծում և այլն:

Նախագծի կատարման ժամանակ գնահատվում են հետևյալ ակտիվությունները.

Նախագծի գաղափարի որոշում, նախագծի պլանավորում, գործառույթների բաշխում:

Կազմակերպում, ֆինանսական հաշվարկ, հովանավորի որոնում, հասարակայնության հետ հարաբերություն, նյութի մատակարարում, երաժշտական ձևավորում, ռեժիսուրա, սղագրություն, նկարչություն, դիզայն. հանդերձանք, դեկորացիա, գրիմ, ռեսուրսի ստեղծում, ներկայացմանը մասնակցություն (դերասան, վարող, լուսավորող և այլն), ներկայացում և այլն:

Պահանջներ, որոնք պետք է բավարարեն ամփոփիչ առաջադրանքները

- առաջադրանքի ամեն մի տեսակին պետք է կցվի գնահատման ընդհանուր աղյուսակը,
- գնահատման ընդհանուր աղյուսակը պետք է ճշգրտվի կոնկրետ առաջադրանքի պայմանի և անցած նյութի հաշվառումով,
- 10 միավորը պետք է բաշխվի գնահատման աղյուսակի մեջ մտնող չափանիշների վրա,
- մատնանշված պետք է լինեն չափորոշչի այն արդյունքները, որոնց ստուգմանը ծառայում է ամփոփիչ առաջադրանքը:

Գնահատման աղյուսակի նմուշներ.

Գործնական աշխատանքի (աշխատության) գնահատում					
Ամսաթիվ.	Աշխատանքի (աշխատության) տեսակ .				
Աշակերտ	Գնահատման չափանիշներ				Ամփոփիչ միավոր
	Կազմակերպվածություն (Ժամանակաչափի պահպանում, անհրաժեշտ պարագաների առկայություն)	Նյութի, տեխնիկայի և գեղարվեստապատկերավոր միջոցների տիրապետում	Ստեղծագործականություն, այսինքն՝ որքանով արդյունավետ է կիրառում տեխնիկան, նյութը և գեղարվեստապատկերավոր միջոցները՝	Համագործակցություն խմբային աշխատանքի ժամանակ	Միավորների առավելագույն քանակը՝ 10

	0-1	0-3	մտահղացումը հաղորդելու համար 0-4	0-2	
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					

Գործնական աշխատանքի (աշխատության) գնահատում		
Ամսաթիվ.	Աշխատանքի (աշխատության) տեսակ. նատյուրնորտ	
	Նյութ.	ջրաներկ, գուաշ
Աշակերտ	Գնահատման չափանիշներ	Ամփոփիչ միավոր

	Կոմպոզիցիա	Ձև/ձավալ	Գույն	Ֆակտուրա	Տարածություն	Միավորների առավելագույն քանակը՝ 10
	<p>Որքանով է կարողանում նկարելու օբյեկտները նկարչական հարթության վրա կոմպոզիցիոն բաշխել (կոմպոզիցիոն հաշվեկշռի պահպանում և այլն) և փոխհարաբերակցություն հաղորդել</p> <p>0-2</p>	<p>Որքանով է պահպանում առարկայի համամասնությունները և որքանով է կարողանում դրանց ծավալը հաղորդել լույս-ստվերի միջոցով</p> <p>0-2</p>	<p>Որքանով է համապատասխանում գույների երանգները նկարելու օբյեկտներին, կամ որքանով ստեղծագործաբար է որոշված գույնի խնդիրը աշխատանքում</p> <p>0-2</p>	<p>Որքանով է կարողանում հաղորդել նկարելու օբյեկտների (առարկաների, գործվածքի) ֆակտուրան</p> <p>0-2</p>	<p>Որքանով է կարողանում ստեղծել տարածության տպավորություն (առաջին պլան, միջին պլան, ետին պլան (ֆոն))</p> <p>0-2</p>	
1.						
2.						
3.						
4.						
5.						
6.						
7.						

Գործնական աշխատանքի (աշխատության) գնահատում

Ամսաթիվ.

Աշխատանքի (աշխատության) տեսակ .

Աշակերտ	Գնահատման չափանիշներ			Ամփոփիչ միավոր
<p>Կազմակերպվածություն (Ժամանակաչափի պահպանում, անհրաժեշտ սարքավորանքի առկայություն)</p> <p align="center">0-1</p>	<p>Նյութի, տեխնիկայի և գեղարվեստա-արատահյտչական միջոցների տիրապետում</p> <p align="center">0- 3</p>	<p>Ստեղծագործականություն, այսինքն՝ որքանով արդյունավետ է կիրառում տեխնիկան, նյութը և գեղարվեստա-արատահյտչական միջոցները մտահղացումը հաղորդելու համար</p> <p align="center">0- 4</p>	<p>Համագործակցություն խմբային աշխատանքի ժամանակ</p> <p align="center">0-2</p>	<p align="center">Միավորների առավելագույն քանակ՝ 10</p>
1.				
2.				
3.				
4.				
5				
6.				
7.				

Արվեստի նմուշի վերլուծության գնահատում				
Ամսաթիվ. Արվեստի նմուշ. Հեղինակ.				
Աշակերտ	Գնահատման չափանիշներ			Ամփոփիչ միավոր
	Նկարագրում է աշխատանքը 0- 3	Վերլուծում է կոմպոզիցիան և գեղարվեստա-արտահայտչական միջոցները 0- 3	Հիմնավորում է սեփական մեկնաբանությունը 0- 4	Միավորների առավելագույն քանակ՝ 10
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				

Շնորհանդեսային կարողությունների գնահատում				
Ամսաթիվ. Շնորհանդեսի տեսակ. Զեկուցում-ռեֆերատ				
Աշակերտ	Գնահատման չափանիշներ			Ամփոփիչ միավոր
	Ասելիքի պարզ և հասկանալի հաղորդում, լսարանի	Դիտողականությունների և տեխնիկական միջոցների կիրառում	Հարցերին համարժեք պատասխան տալ	Միավորների առավելագույն քանակ՝ 10

	հետ կապ 0-3	0-4	0-3	
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				

Գլուխ XLVI

Առարկայական իրազեկություններ տարրական աստիճանում

I դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
--	---------------------------------------	----------------------------------

<p>Կերպ.կիր .I.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է կիրառել կերպարվեստի մեկ կամ մի քանի հիմնական տարր և սկզբունք:</p> <p>Կերպ.կիր.I.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է դիմել տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի:</p> <p>Կերպ.կիր.I.3. Աշակերտը շրջակա միջավայրում զննում է տարբեր գույներ և ձևեր և կարող է զննման արդյունքն արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր.I.4 . Աշակերտը կարող է աշխատանքներ ստեղծել տպավորությունների և երևակայության միջոցով:</p> <p>Կերպ.կիր.I.5. Աշակերտը կարող է դրսևորել պարզ աշխատանքային գործունեության տարրական կարողություններ և հմտություններ:</p> <p>Կերպ.կիր.I.6. Աշակերտը կարող է աշխատել անհատապես և ուրիշների հետ միասին:</p>	<p>Կերպ.կիր.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ, արտահայտել կարծիք իր և համադասարանցիների աշխատանքների մասին:</p> <p>Կերպ.կիր.I.8. Աշակերտը հարգում է իր և այլոց աշխատանքները:</p> <p>Կերպ.կիր.I.9. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:</p> <p>Կերպ.կիր.I.10. Աշակերտը ճանաչում է տարրական տերմինները և կարող է դրանք կիրառել:</p>	<p>Կերպ.կիր.I.11. Աշակերտը կարող է միմյանցից տարբերել արվեստի որոշ բնագավառներ և ժանրեր և կապել դրանք առօրյա կյանքի հետ:</p> <p>Կերպ.կիր.I.12. Աշակերտը կարող է արվեստի գործի բովանդակությունը կապել իր փորձի հետ:</p>
--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ. կիր. I.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է կիրառել կերպարվեստի մեկ կամ մի քանի հիմնական տարր և սկզբունք:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Աշխատանքում կիրառում է տարբեր տեսակի գծեր (հաստ և բարակ, ուղիղ և ավիքավոր, բեկյալ, կտրտված, ուրվագծային):
- Գույների միախառնմամբ ստանում է նոր գույներ:
- Ստեղծում է պարզ զարդանախշեր կրկնագծերից, գույներից և երկրաչափական մարմիններից:
- Ընտրում է նկարելու հարթության ուղղահայաց կամ հորիզոնական դիրք՝ ծավալին համապատասխան:

Կերպ. կիր. I.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է դիմել տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կիրառում է մատիտներ, կավճաներկ, ֆլումաստերներ, գուաշի ներկեր՝ գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքներ ստեղծելու համար:
- Գունավոր թղթերից, ստվարաթղթից, բնական նյութից պատրաստում է ապլիկացիա, կոլաժ:
- Հավաքում է խճանկար տարբեր նյութերից (կտրում, պատռում, սոսնձում է թղթերը, տերևները և այլն):
- Պլաստիլինից պատրաստում է տարբեր ձևեր:

Կերպ. կիր. I.3. Աշակերտը շրջակա միջավայրում զննում է տարբեր գույներ և ձևեր և կարող է զննման արդյունքն արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Շրջապատում ճանաչում և անվանում է պարզ երկրաչափական ձևերը (եռանկյունի, քառանկյունի, շրջան) և արտացոլում է աշխատանքում:
- Ճանաչում, անվանում և աշխատանքում արտացոլում է բնության մեջ գոյություն ունեցող գույները և ձևերը:

Կերպ. կիր. I.4 . Աշակերտը կարող է աշխատանքներ ստեղծել տպավորությունների և երևակայության միջոցով:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Աշխատանքում արտացոլում է ստացած տպավորությունները:
- Երևակայությամբ պատկերում է ստեղծած գործող անձանց:
- Պատկերում է երևակայական շրջակա միջավայր:
- Նկարում է գրական ստեղծագործությունների գործող անձանց և դրվագներ:

Կերպ.կիր.1.5. Աշակերտը կարող է դրսևորել պարզ աշխատանքային գործունեության տարրական կարողություններ և հմտություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Դասին ներկայանում է անհրաժեշտ պարագաներով:
- Հավաքում է աշխատանքային տեղը, լվանում և պահում է աշխատանքային գործիքները և նյութը:
- Պահպանում է անվտանգության կանոնները:
- Պահպանում է ժամանակաչափը՝ ամեն տեսակի ակտիվությունների ժամանակ:

Կերպ.կիր.1.6. Աշակերտը կարող է աշխատել անհատապես և ուրիշների հետ միասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է թիմային աշխատանքին:
- Ձգտում է առաջադրված խնդիրը լուծել ինքնուրույն և զույգի հետ միասին:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքեր, արտահայտել կարծիք սեփական և համադասարանցիների աշխատանքների մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Սեփական և/կամ միասնական աշխատանք ներկայացնելիս՝ պարզաբանում է, թե ինչ է արտացոլված աշխատանքում:
- Համադասարանցուն առաջադրում է հարցեր նրա աշխատանքի մասին:
- Կիսում է համադասարանցիների տպավորությունները ներկայացված աշխատանքի մասին (հավանում եմ, չեմ հավանում):
- Լսում է համադասարանցիներին, ուսուցչին:
- Սպասում է ուրիշների կարծիք հայտնելուն:

Կերպ.կիր.1.8. Աշակերտը հարգում է սեփական և այլոց աշխատանքը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Աջակցում և ոգևորում է համադասարանցիներին աշխատելու ժամանակ:
- Խնամքով է վերաբերում ուրիշի և իր աշխատանքներին:

Կերպ.կիր.1.9. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է դասարանական հանդեսին:
- Մասնակցում է դասարանական ցուցահանդեսին:
- Հաճախում է թանգարաններ և ցուցահանդեսներ:
- Հաճախում է էքսկուրսիաների և ծանոթանում է մշակութային ժառանգությանը:

Կերպ.կիր.1.10. Աշակերտը ճանաչում է տարրական տերմինները և կարող է կիրառել դրանք :

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Աշխատանքի մեջ ճանաչում և անվանում է կերպարվեստի և կիրառական արվեստի իրեն ծանոթ տարրերը:
- Թվարկում է նյութը և գործիքները, որոնք կիրառել է աշխատանքում:
- Խոսելիս ճիշտ է գործածում տարրական տերմինները, արձագանքում է ուսուցչի մեկնաբանությանը (հասկանում և կատարում է ցուցումները, օր., նկարել բնանկար կամ դիմանկար):

Ուղղություն. Արվեստի ընկալում համատեքստում

Կերպ.կիր.1.11. Աշակերտը կարող է միմյանցից տարբերել արվեստի որոշ բնագավառներ և ժանրեր և դրանք կապել առօրյա կյանքի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Թվարկում է արվեստի բնագավառները (նկարչություն, երաժշտություն, կինո, թատրոն և այլն) և առանձնացնում է յուրաքանչյուր բնագավառին բնորոշ գլխավոր նշանը (գույն, ձայն, շարժում):
- Անվանում է արվեստի առանձին բնագավառի հետ կապված մասնագիտությունները:
- Թվարկում է օպերային, բալետային, թատերական ներկայացումներ, որոնց ներկա է գտնվել, և խոսում է ստացած տպավորությունների մասին:
- Թվարկում է կերպարվեստի հիմնական ժանրերը (նատյուրմորտ, դիմանկար, բնանկար):
- Խոսում է սիրելի պատկերազարդ գրքերի մասին:
- Անվանում է ճարտարապետական հուշարձանները և քանդակները, որոնք տեսել է:

Կերպ.կիր.1.12. Աշակերտը կարող է արվեստի աշխատանքի բովանդակությունը կապել իր փորձի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Դիտում է ստեղծագործությունները, խոսում է դրանց բովանդակության (սյուժեներ, տեսարաններ, երևույթներ և այլն) և դրանցից ստացած տպավորությունների մասին:
- Անվանում է կենդանիներ, բույսեր, առարկաներ, որոնք պատկերված են արվեստի կոնկրետ գործում:
- Արվեստի գործերում ճանաչում է արտացոլված տարվա ժամանակները:

Ծրագրի բովանդակություն

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Գիծ (բարակ, հաստ, ուղիղ, ալիքաձև, բեկյալ, կտրտված, ուրվագծային), գույն (հիմնական, բաղադրյալ): Կոմպոզիցիոն բաշխման սկզբունք՝ ուղղահայաց կամ հորիզոնական ձևաչափի ընտրություն, ձևաչափի վրա պատկերի բաշխում:

Երաշխավորված տեսողական նյութ.

Տարբեր տեսակի գիծ և գույն՝ օրինակ, նախամարդու նկարչություն (Լասկոյի քարանձավ), Վինսենտ Վան Գոգի, Վասիլի Կանդինսկու, Խուան Միրոյի և այլոց ստեղծագործությունները:

Պարզ զարդանախշ (կրկնվող գծերից, գույներից և երկրաչափական պատկերներից բաղկացած)՝ օրինակ, իսսուրական գորգի և հագուստի զարդանախշ, հունական մեանդրի պարզ տարրերակ և այլն:

Նյութ և գործիք.

Մատիտ (գունավոր, հասարակ), կավճաներկ, ֆլումաստեր, գուաշ, գունավոր թուղթ, ստվարաթուղթ, պլաստիլին, բնական նյութ (տերև, կոն, հատիկային և այլն), վրձին, մկրատ, սոսինձ:

Տեխնիկա և ընթացակարգ.

Գեղանկարչություն, գրաֆիկա, ապլիկացիա, կոլաժ, խճանկար, ծեփում, պատառոտում, կտրատում, սոսնձում:

Երաշխավորված տեսողական նյութ.

Ապլիկացիա և կոլաժ՝ օրինակ, Անրի Մատիսի, Պարլո Պիկասոյի և այլոց ստեղծագործություններ, խճանկար՝ Պոմպեյի խճանկարի զարդանախշային հատվածներ և այլն:

Շրջակա միջավայրի զննում.

Ձևի, գույնի, գծերի ճանաչում:

Գեղարվեստական գաղափարների աղբյուրներ

Պատկերացում, սեփական երևակայությամբ ստեղծված նկարներ, շրջակա միջավայրի գննման արդյունքում ստացած տպավորություններ, հեքիաթներ, գեղարվեստական գրականություն:

Գեղարվեստական և անիմացիոն ֆիլմեր, համերգային, թատերական, կրկեսային ներկայացում:

Ենթադրյալ թեմաներ և ակտիվություններ.

«Գույների թագավորություն», «Աշուն», «Դպրոց», «Ուրախ գնացք», «Նոր տարի», «Ստորջրյա աշխարհ», «Իմ քաղաքը/գյուղը» և այլն:

Վարժություններ գույների համադրմամբ նոր գույն ստանալու համար, վարժություններ գուգահեռ, ուղղահայաց, հորիզոնական, շեղ գծերով, կետերի միացմամբ պատկերի ստացում, բաժակի հատակի, ձեռքի դաստակի շրջագծում, գունավորում, աշխատանքում երկրաչափական ձևերի կիրառում:

Աշխատանքային գործունեություն.

Անհրաժեշտ պարագաները բերել-կարգավորել, աշխատատեղի հավաքում, ժամանակաչափի և անվտանգության կանոնների պահպանում:

Աշխատանքի ռազմավարություն.

Աշխատանք ինքնուրույն, գույզի հետ, թիմով:

Միջոցառումներ.

Դասարանային ցուցահանդես, հանդես, էքսկուրսիաներ թանգարաններ, պատկերասրահներ և քաղաքից դուրս մշակութային ժառանգությանը ծանոթանալու նպատակով:

Ներկայացում.

Ծանոթ լսարանի առջև աշխատանքը ներկայացնել (խոսել աշխատության մասին մասին), հարցեր առաջադրել, պատասխան տալ, տպավորություններ փոխանակել, ուրիշի կարծիքը ուշադրությամբ լսել, հարգանք դրսևորել ուրիշի աշխատանքի և կարծիքի նկատմամբ, տարրական տերմիններ օգտագործել:

Արվեստի ընկալում համատեքստում.

Արվեստի բնագավառների հետ ծանոթացում (կերպարվեստ, երաժշտություն, կինո, թատրոն և այլն), զրույց արվեստի բնագավառների և ծանոթ աշխատանքների մասին, կերպարվեստի մի քանի հիմնական ժանրի հետ ծանոթացում (*դիմանկար՝ Նիկո Փիրոսմանի և այլն. նատյուրմորտ՝ Վինսենտ Վան Գոգ և այլն: Բնանկար՝ Էլենե Ախլվեղիանի և այլն*), տեսողական նյութի դիտում, զրույց տպավորությունների, ստեղծագործության բովանդակության մասին, դրա կապումը սեփական փորձի հետ: Կիրառական արվեստ՝ հնագույն դարաշրջանի հունական խեցեգործություն:

II դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներ՝ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
--	---------------------------------------	----------------------------------

<p>Կերպ.կիր.II.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է կիրառել կերպարվեստի մի քանի հիմնական տարր և սկզբունք:</p> <p>Կերպ.կիր.II.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է դիմել տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի:</p> <p>Կերպ.կիր.II.3. Աշակերտը շրջակա միջավայրում զննում է տարբեր գույներ և ձևեր և կարող է զննման արդյունքն արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր.II.4 . Աշակերտը կարող է աշխատանքներ ստեղծել տպավորությունների և երևակայության միջոցով:</p> <p>Կերպ.կիր.II.5. Աշակերտը կարող է դրսևորել պարզ աշխատանքային գործունեության տարրական կարողություններ և հմտություններ:</p> <p>Կերպ.կիր.II.6. Աշակերտը կարող է</p>	<p>Կերպ.կիր.II.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ, արտահայտել կարծիք և տպավորություններ իր և համադասարանցիների աշխատանքների մասին:</p> <p>Կերպ.կիր.II.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը գաղափարներ արտահայտելու միջոց է:</p> <p>Կերպ.կիր.II.9. Աշակերտը հարգում է սեփական և այլոց աշխատանքները:</p> <p>Կերպ.կիր.II.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:</p> <p>Կերպ.կիր.II.11. Աշակերտը ճանաչում է տարրական տերմինները և կարող է կիրառել դրանք:</p>	<p>Կերպ.կիր.II.12. Աշակերտը կարող է միմյանցից տարբերել արվեստի որոշ բնագավառներ և ժանրեր և դրանք կապել առօրյա կյանքի հետ:</p> <p>Կերպ.կիր.II.13. Աշակերտը կարող է արվեստի գործի բովանդակությունը կապել առօրյա կյանքի և իր փորձի հետ:</p>
---	---	--

<p>աշխատել ինքնուրույն և ուրիշների հետ միասին:</p>		
--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ.կիր.Ու.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է կիրառել կերպարվեստի մի քանի հիմնական տարր և սկզբունք:

- Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը`
- Կիրառում է տարբեր տեսակի գծեր (բեկյալ, կտրատված, ալիքավոր, ուղիղ և այլն) և գույն` աշխատանքում տրամադրվածություն (ուրախություն, մտահոգություն, վախ) հաղորդելու համար:
 - Աշխատանքում կիրառում է տարբեր հաստության ուրվագիծ:

- Ստեղծում է պարզ զարդանախշեր՝ գծերի, բծերի, ձևերի և պատկերների միջոցով:
- Տարբեր եղանակով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
- Թվարկում է ծիածանի գույները, տարբերում է սառը և տաք գույները և կիրառում է դրանք աշխատանքում:
- Պատկերը բաշխում է նկարչական հարթության վրա:
- Պատկերում է համաչափ և/կամ անհամաչափ ձևեր:

Կերպ.կիր.II.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է դիմել տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խառը նյութերով և տարբեր տեխնիկայով պատրաստում է գրքի էջանշաններ, բացիկներ, տոնածառի խաղալիքներ և այլն:
- Պատրաստում է պարզ կառուցվածքներ, կիրառելով տարբեր նյութեր, օրինակ, ստվարաթուղթ, ճմրթած թուղթ, մետաղյա կամ պլաստամասսայե տուփեր և այլն:
- Ծեփում է երկրաչափական ձևեր և դրանցից ստեղծում է պարզ կոմպոզիցիաներ (տուն, ձմեռ պապ և այլն):
- Բնական և արհեստական նյութից պատրաստում է ապլիկացիա, կոլաժ և խճանկար:
- Բնական և արհեստական նյութի (կոն, ճյուղ, հուլունք, տերև, հատիկային, պլաստիլին, ծառի կեղև, կոթուն և այլն) կիրառմամբ պատրաստում է խաղալիք:

Կերպ.կիր.II.3. Աշակերտը շրջակա միջավայրում գնում է տարբեր գույներ և ձևեր և կարող է գննման արդյունքն արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Արտացոլում է օբյեկտի ձևը աշխատության մեջ:
- Համապատասխանաբար է ընտրում օբյեկտի գույնը:
- Նկարում է բնօրինակից (օր., պարզ նատյուրմորտ):
- Համապատասխան գույնով պատկերում է գիշեր-ցերեկվա տարբեր հատվածներ, տարվա ժամանակ:
- Նկարում է հիշողությամբ:

Կերպ.կիր.II.4. Աշակերտը կարող է աշխատանքներ ստեղծել տպավորությունների և երևակայության միջոցով:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Արտացոլում է դիտարկելու արդյունքում ստացած տպավորությունները (օր., տարվա ժամանակները):

- Նկարում է երևակայությամբ ստեղծած միջավայր և սյուժեներ:
- Ստեղծում է գրական ստեղծագործությունների պարզ պատկերագրումներ:

Կերպ.կիր.II.5. Աշակերտը կարող է դրսևորել պարզ աշխատանքային գործունեության տարրական կարողություններ և հմտություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Դասին ներկայանում է անհրաժեշտ պարագաներով:
- Նշում է առաջադրանքները:
- Հավաքում է աշխատանքային տեղը, լվանում և պահում է աշխատանքային գործիքները և նյութը:
- Պահպանում է անվտանգության և հիգիենայի կանոնները:
- Պահպանում է ժամանակաչափը ամեն տեսակի ակտիվությունների ժամանակ:

Կերպ.կիր.II.6. Աշակերտը կարող է աշխատել ինքնուրույն և ուրիշների հետ միասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է թիմային աշխատանքին (կատարում է իր ստանձնած գործառույթը):
- Ձգտում է տրված խնդիրը լուծել ինքնուրույն և զույգի հետ միասին:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր.II.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ, արտահայտել կարծիք և տպավորություններ սեփական և համադասարանցիների աշխատանքների մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կիսում է համադասարանցիների տպավորությունները ներկայացված աշխատանքի մասին (հավանում եմ, չեմ հավանում):
- Լսում է համադասարանցիներին և ուսուցչին:
- Առաջադրում է հարցեր՝ կապված ներկայացված աշխատանքի հետ:
- Սպասում է, որ ուրիշներն ավարտեն իրենց խոսքը:
- Խոսում է տպավորությունների մասին, որ ստացել է ուրիշի աշխատանքից:

Կերպ.կիր.II.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը գաղափարներ արտահայտելու միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է սեփական մտահղացման, աշխատանքում հաղորդած գաղափարների մասին:

- Խոսում է գաղափարների մասին, որոնք ստացել է ուրիշի աշխատանքից:
- Առաջադրում է հարցեր՝ կապված աշխատանքի բովանդակության հետ:
- Անվանում է պատճառը, որի հետևանքով ստեղծեց այս կամ այն աշխատանքը:

Կերպ.կիր.II.9. Աշակերտը հարգում է սեփական և այլոց աշխատանքները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Աջակցում է համադասարանցիներին և բարյացակամ է նրանց աշխատանքների և կարծիքի նկատմամբ:
- Խնամքով է վերաբերվում ուրիշի և իր աշխատանքներին:

Կերպ.կիր.II.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է դասարանային կամ դպրոցական հանդեսին:
- Մասնակցում է դասարանային ցուցահանդեսին:
- Հաճախում է թանգարաններ և ցուցահանդեսներ:
- Էքսկուրսիաների ժամանակ ծանոթանում է մշակութային ժառանգությանը:

Կերպ.կիր.II.11. Աշակերտը ճանաչում է տարրական տերմինները և կարող է դրանք կիրառել:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կերպարվեստի և կիրառական արվեստի նմուշներում ճանաչում և անվանում է իրեն ծանոթ տարրերը:
- Թվարկում է նյութը և գործիքները, որոնք կիրառել է աշխատանքում:
- Հասկանում է իր կողմից կիրառված տերմինի բովանդակությունը:

Ուղղություն. Արվեստի ընկալում համատեքստում

Կերպ.կիր.II.12. Աշակերտը կարող է միմյանցից տարբերել արվեստի որոշ բնագավառներ և ժանրեր և դրանք կապել առօրյա կյանքի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Թվարկում է կերպարվեստի բնագավառները (գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն և այլն) և առանձնացնում է յուրաքանչյուրի գլխավոր տարրը (գույն, գիծ, ձև և այլն):
- Ճանաչում է աշխատանքի ժանրը (բնանկար, նատյուրմորտ, դիմանկար և այլն) և առանձնացնում է այս ժանրին բնորոշ գլխավոր նշանը:

- Խոսում է սիրելի պատկերազարդ գրքերի մասին, մեկնաբանում է, թե ինչու է հավանում այս կամ այն պատկերազարդումը:
- Խոսում է արվեստի նմուշների մասին, որոնք հանդիպում են ամենօրյա կյանքում (ճարտարապետական հուշարձան, քանդակագործություն և այլն) և արտահայտում է սեփական վերաբերմունքը (որն է հավանում և ինչու):

Կերպ.կիր.II.13. Աշակերտը կարող է արվեստի գործի բովանդակությունը կապել առօրյա կյանքի և իր փորձի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է աշխատանքի բովանդակության և դրանում արտահայտված տրամադրության մասին:
- Արվեստի նմուշներում ճանաչում է ծանոթ սյուժեները, դրվագները, իրերը և երևույթները:
- Արվեստի նմուշներում ճանաչում է իրեն ծանոթ կենդանիներին, թռչուններին, բույսերը, կենցաղային առարկաները, շրջապատում տեսած օբյեկտները, տրանսպորտային միջոցները և այլն:
- Բնանկարում ճանաչում է աշխարհագրական լանդշաֆտը (լեռ, լեռնաշղթա, ծով, ցածրավայր, անապատ և այլն):

Օրագրի բովանդակություն

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Գիծ, ուրվագիծ, գույն (սառը, տաք) ձև (համաչափ, անհամաչափ), պարզ զարդանախշի ստեղծում (գծերի, բծերի, ձևերի և ֆիգուրների միջոցով), տրամադրության հաղորդում գծով, գույնով, կոմպոզիցիոն բաշխման հիմունքներ (ուղղահայաց կամ հորիզոնական նկարային հարթության ընտրություն), տարբեր հնարներով գլխավոր տարրի առանձնացում նկարում, պատկերի բաշխում նկարային հարթության վրա:

Երաշխավորված տեսողական նյութ.

Տարբեր տեսակի գծեր և տարբեր հաստության ուրվագծեր՝ օրինակ, նախամարդու նկարչություն (օր., Ալտամիրայի քարանձավ), եզրիպտական որմնանկարչություն, Անրի Մատիսի, Պաուլ Կլեեի և ուրիշների ստեղծագործություններ:

Տարբեր հնարներով (չափ, գույն, ձև) աշխատանքում գլխավորի առանձնացում՝ օրինակ, Նարմերի սալիկ, Ռաֆայել Սանտի («Միքստինյան տիրամայրը»):

Կողմնորոշում. հորիզոնական և ուղղահայաց ձևաչափի որոշում՝ օրինակ, Պարթենոնի ֆրիզի ռելիեֆները, Լեոնարդո Դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիքը», Յան Վան Էյլի «Արնուֆիների ընտանիքը» և այլն:

Նյութ և գործիք.

Մատիտ, կավճաներկ, գուաշ, ֆլումաստեր, պլաստիլին, մեղրամոմ, գունավոր թուղթ, ստվարաթուղթ, տարբեր նյութի տուփեր, բնական և արհեստական նյութ (կոն, ծառի կեղև, արմատ, ճյուղ, տերև, կոթուն, հատիկային, ջրիմուռ, խեցի, գույնզգույն քարեր, հուլունք, կոճակներ, ճմրթված թուղթ, պլաստմասսա, մետաղ և այլն), վրձին, մկրատ, սոսինձ և այլն:

Տեխնիկա և ընթացակարգ.

Գեղանկարչություն, գրաֆիկա, ծեփում, ապլիկացիա, կոլաժ, խճանկար, թղթի պլաստիկա, պատռել, կտրել, սոսնձել, մոդելավորել, կոստրուկցիա հավաքել:

Շրջակա միջավայրի գնում.

Գծի, գույնի, ձևի ճանաչում:

Գեղարվեստական գաղափարների աղբյուրներ.

Պատկերացում, շրջակա միջավայրի գնման արդյունքում ստացած տպավորություններ (նկարչություն երևակայությամբ, բնօրինակից և հիշողությամբ), հարմարեցված դիցաբանություն (վրացական, հունական, հին արևելյան), աշխարհի յոթ հրաշալիքները, գեղարվեստական գրականություն, աշխարհի տարբեր երկրների հեքիաթներ (օրինակ, Հանս Բրիստիան Անդերսենի, Գրիմ եղբայրների հեքիաթները, առակներ և այլն), մանկական գրականության պատկերազարդումներ (Գ.Ա.Վ. Տրաուգոտիի պատկերազարդումներ, Միլնի «Վինի Թուհի» ներթափանցող պատկերազարդումներ և այլն) գեղարվեստական և անիմացիոն ֆիլմեր, համերգային, թատերական, կրկեսային ներկայացումներ և այլն:

Հատվածներ հեքիաթներից, մանկական Աստվածաշնչից, հարմարեցված դիցաբանությունից (ինչպես վրացական, այնպես էլ հունական) և այլն: Հունական առասպելների հետ ծանոթացում համապատասխան խեցեղեն գեղարվեստական նմուշներ ցույց տալով:

Ենթադրյալ թեմաներ.

«Ամառային արձակուրդ», «Բարեկամություն», «Գյուղը աշնանը», «Աշնանային նատյուրմորտ», «Նոր տարվա գիշեր», «Ձմեռային բնանկար», «Ծնունդ», «Ձատիկ», «Բնությունը գարնանը», «Կրկեսում», «Գազանանոցում», «Իմ բակը», «Իմ քաղաքի

հրապարակը», «Արկածային քաղաք», «Միրելի հերոս», թեմաներ ըստ սեփական երևակայության:

Աշխատանքային գործունեություն.

Անհրաժեշտ պարագաները բերել-կարգավորել, առաջադրանքի նշում, աշխատատեղի հավաքում, ժամանակաչափի, անվտանգության կանոնների և հիգիենայի պահպանում:

Աշխատանքի ռազմավարություն.

Աշխատանք ինքնուրույն, զույգի հետ, թիմով:

Միջոցառումներ.

Դպրոցական կամ դասարանային ցուցահանդես, հանդես, էքսկուրսիաներ թանգարաններ, պատկերասրահներ, քաղաքից դուրս մշակութային ժառանգությանը ծանոթանալու նպատակով:

Ներկայացում.

Ծանոթ լսարանին աշխատանք ներկայացնել (խոսել աշխատության մասին), հարցեր առաջադրել, պատասխան տալ, տպավորություններ փոխանակել, հարգանք դրսևորել ուրիշի աշխատանքի և կարծիքի նկատմամբ, ուրիշի կարծիքը ուշադրությամբ լսել, տարրական տերմիններ կիրառել:

Արվեստի ընկալում համատեքստում.

Կերպարվեստի բնագավառների (գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն և այլն) և դրանց ժանրերի (բնանկար, նատյուրմորտ, դիմանկար և այլն), ինչպես նաև ճարտարապետական հուշարձանների ծանոթացում, համաշխարհային արվեստի նշանակալից նմուշների ցուցադրում,

Գեղանկարչություն՝ օրինակ, Կլոդ Մոնե, Օգյուստ Ռենուար, Վինսենտ Վան Գոգ, Անրի Մատիս և այլք:

Գրաֆիկա՝ օրինակ, Ալբրեխտ Դյուրեր, Անրի Մատիս, Պաբլո Պիկասո (գրաֆիկային աշխատանքներ (օր., «Եզներ») և այլն:

Քանդակագործություն՝ օրինակ, եգիպտական, Միջագետքի, հին հունական և այլն:

Ճարտարապետություն՝ օրինակ, եգիպտական բուրգեր, Պարթենոն, Մցխեթայի Ջվարի:

Տրամադրվածության ճանաչում՝ Սանդրո Բոտիչելի («Գարուն»), Օգյուստ Ռենուար և այլն:

Զրույց տպավորությունների, բովանդակության, սյուժեների, կենցաղային առարկաների, շրջապատում տեսած երևույթների և օբյեկտների մասին:

Կիրառական արվեստ.
Հնագույն և անտիկ դարաշրջանի խեցեղենի նմուշներ՝ զարդանախշ
(երկրաչափական, բուսական, պարուրաձև և այլն):

III դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարվա վերջին նվաճվելիք արդյունքներ՝ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
--	---------------------------------------	----------------------------------

<p>Կերպ.կիր.III.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է կիրառել կերպարվեստի մի քանի հիմնական տարրեր և սկզբունքներ:</p> <p>Կերպ.կիր.III.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է զարգացնել տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի օգտագործման կարողություն:</p> <p>Կերպ.կիր.III.3. Աշակերտը շրջակա միջավայրում զննում է առարկաներ, օբյեկտներ, երևույթներ և կարող է զննման արդյունքն արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր.III.4 . Աշակերտը կարող է աշխատանքներ ստեղծել տպավորությունների և երևակայության միջոցով:</p> <p>Կերպ.կիր.III.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել պարզ աշխատանք:</p> <p>Կերպ.կիր.III.6. Աշակերտը կարող է աշխատել անհատապես</p>	<p>Կերպ.կիր.III.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և կիսել համադասարանցիների կարծիքը և գաղափարները:</p> <p>Կերպ.կիր.III.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը գաղափարներ արտահայտելու միջոց է:</p> <p>Կերպ.կիր.III.9. Աշակերտը հարգում է սեփական և ուրիշի աշխատանքը և կարծիքը:</p> <p>Կերպ.կիր.III.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:</p>	<p>Կերպ.կիր.III.11. Աշակերտը կարող է միմյանցից տարբերել կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները, որոշ ժանրեր և դրանք կապել առօրյա կյանքի հետ:</p> <p>Կերպ.կիր.III.12. Աշակերտը կարող է կապել արվեստի ստեղծագործության բովանդակությունն այլ առարկաներից անցած նյութի հետ:</p> <p>Կերպ.կիր.III.13. Աշակերտը ծանոթանում է տեղական միջավայրում գոյություն ունեցող արվեստի նմուշներին:</p>
--	---	---

և ուրիշների հետ միասին:		
-------------------------	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ.կիր.ՅՊ.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է կիրառել կերպարվեստի մի քանի հիմնական տարր և սկզբունք:

- Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝
- Հաղորդում է տրամադրությունը գեղարվեստական հնարների միջոցով (գիծ, գույն և ձև):
 - Աշխատանքում ստեղծում է ֆակտուրաներ (տարբեր տեսակի նրբագծով, ծածկած մակերևույթի քերծումով, մատների, սպունգի, ձողիկների, խոզանակի օգնությամբ և այլն):
 - Աշխատանքում օգտագործում է սառը և տաք գույները:
 - Գունային անիվի վրա ճանաչում է հիմնական, բաղադրված և հակադիր գույները (կարմիր-կանաչ, դեղին-յասամանագույն, կապույտ-նարնջագույն):
 - Տարբեր հնարանքներով (ձևով, չափով, գույնով) աշխատանքում առանձնացնում է գլխավորը:
 - Պատկերը մտածված բաշխում է նկարային հարթության վրա:

Կերպ.կիր.ՅՊ.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է զարգացնել տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի օգտագործման կարողություն:

- Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝
- Նկարում է մատիտով, կավճաներկով, ջրաներկով, գուաշով, ածխով, կավճով և այլն:

- Շեփում է պարզ ձևեր տարբեր նյութերից (կավ, պլաստիլին, խմոր, մեղրամոմ և այլն):
- Տարբեր նյութերով ստեղծում է պարզ պատկերներ, կոմպոզիցիաներ:
- Հայթայթած և արդեն ծանոթ նյութից (ծառի կեղև, խեցի, մետաղալար, պարան, թուղթ, հուլունք, սովարաթուղթ և այլն) պատրաստում է պարզ կառուցվածքներ:

Կերպ.կիր.III.3. Աշակերտը շրջակա միջավայրում զննում է առարկաներ, օբյեկտներ, երևույթներ և կարող է զննման արդյունքն արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Նկարում հաղորդում է շրջապատի դիտարկման արդյունքում ստացած տպավորությունը:
- Նկարում է դիմանկարներ (ծնողներ, հասակակիցներ և այլք):
- Հիշողությամբ նկարելիս՝ պատկերում է այս կամ այն միջավայրին համապատասխան օբյեկտներ և բնորոշ նշաններ:
- Համապատասխան գույնով պատկերում է գիշեր-ցերեկվա տարբեր հատված, տարվա ժամանակ և եղանակ:
- Պատկերում է պարզ երկրաչափական ձևերով հարուցված գուգորդություններ:

Կերպ.կիր.III.4 . Աշակերտը կարող է աշխատանքներ ստեղծել տպավորությունների և երևակայության միջոցով:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Սեփական երևակայությամբ ստեղծում է սյուժեներ ազատ թեմայով:
- Աշխատանքում հաղորդում է բեմադրությունից, համերգից, կրկեսում, գազանանոցում, թանգարանում, էքսկուրսիայում գտնվելու ժամանակ ստացած տպավորությունները:
- Պատկերում է հայտնի նկարիչների աշխատանքներին ծանոթանալու հետևանքով ծնված գաղափարները (թեմա, սյուժե, գործող անձ, գեղարվեստական հնար):
- Նկարում է գրական ստեղծագործության, ֆիլմի, մուլտֆիլմի հերոսների և նաև սեփական երևակայությամբ ստեղծած գործող անձանց:

Կերպ.կիր.III.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել պարզ աշխատանք:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է դասասենյակի, բակի բարեկարգմանը:
- Նշում է առաջադրանքները:
- Պատրաստում և հավաքում է աշխատանքային գործիքները և նյութը:
- Պահպանում է անվտանգության և հիգիենայի կանոնները:
- Պահպանում է ժամանակաչափը ամեն տեսակի ակտիվությունների ժամանակ:

Կերպ.կիր.III.6. Աշակերտը կարող է աշխատել անհատապես և ուրիշների հետ միասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է թիմային աշխատանքին, կատարում է տարբեր պարտականություններ (լիդեր, խմբի անդամ):
- Առաջադրված խնդիրը լուծում է ինքնուրույն կամ գույզի հետ միասին:
- Պահանջում է օգնություն և դրսևորում է ուրիշներին օգնելու նախաձեռնություն:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր.III.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և կիսել համադասարանցիների կարծիքը և գաղափարները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ասում է, թե ինչն է հավանում աշխատանքում, ինչը՝ ոչ, փորձում է հիմնավորել սեփական դիրքորոշումը:
- Լսում է ուսուցչին և համադասարանցիներին և նկատի է առնում նրանց կարծիքը:
- Նկարագրում է աշխատանքի բովանդակությունը:
- Առաջադրում է հարցեր՝ անձանոթ տերմինի կամ խոսքի նշանակությունը ճշտելու համար:
- Աշխատանքի մասին խոսելիս՝ կիրառում է համապատասխան տերմիններ:
- Ընկերների հետ կիսում է դիտարկման արդյունքները և փորձը:
- Աշխատանքը ներկայացնելու ժամանակ առաջադրում և պատասխանում է հարցերին:
- Ներկայացնում է աշխատանքները լսարանի առջև:

Կերպ.կիր.III.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը գաղափարներ արտահայտելու միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է աշխատանքից հարուցված տպավորությունների մասին:
- Խոսում է այն մասին, թե ինչ տրամադրություն կստեղծի այս կամ այն գույնը:
- Ուրիշների աշխատանքներում ձգտում է ճանաչել մտահղացումը և տրամադրությունը:
- Մեկնաբանում է, թե ինչ էր ուզում արտացոլել աշխատանքում:

Կերպ.կիր.III.9. Աշակերտը հարգում է սեփական և ուրիշի աշխատանքը և կարծիքը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Չի աղմկում համադասարանցու աշխատանքը ներկայացնելու ժամանակ:
- Սպասում է ուրիշի խոսքի ավարտելուն:
- Աջակցում, ոգևորում է համադասարանցիներին և բարյացակամ է նրանց նկատմամբ:
- Խնամքով է վերաբերում իր և ուրիշների աշխատանքներին:

Կերպ.կիր.Յ.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է դասարանային բեմադրությանը:
- Մասնակցում է դասարանային և դպրոցական հանդեսին:
- Մասնակցում է դասարանային և դպրոցական ցուցահանդեսին:
- Հաճախում է թանգարաններ և ցուցահանդեսներ:
- Հաճախում է էքսկուրսիաների և ծանոթանում է մշակութային ժառանգությանը:

Ուղղություն. Արվեստի ընկալում համատեքստում

Կերպ.կիր.Յ.11. Աշակերտը կարող է միմյանցից տարբերել կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառները, որոշ ժանրեր և դրանք կապել առօրյա կյանքի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ճանաչում է արվեստի հայտնի աշխատանքները և հատկացնում է դրանք համապատասխան բնագավառին (գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, դեկորատիվ-կիրառական արվեստ):
- Խոսում է արվեստի այս կամ այն բնագավառի նկատմամբ սեփական վերաբերմունքի մասին (որն է հավանում և ինչու):
- Խոսում է այս կամ այն ժանրին բնորոշ նշանների մասին:

Կերպ.կիր.Յ.12. Աշակերտը կարող է կապել արվեստի ստեղծագործության բովանդակությունը այլ առարկաներից անցած նյութի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ճանաչում է սովորած գրական ստեղծագործությունների գործող անձանց և սյուժեները արվեստի նմուշներում:
- Կապում է կերպարվեստի ստեղծագործության բովանդակությունը (օր., տարվա ժամանակները) նույն թեմայով ստեղծված երաժշտական ստեղծագործության հետ, որը լսել է երաժշտության դասի ժամանակ:
- Առաջադրում է հարցեր աշխատանքում արտացոլված առարկաների և երևույթների մասին:

Կերպ.կիր.Յ.13. Աշակերտը ծանոթանում է տեղական միջավայրում գոյություն ունեցող արվեստի նմուշներին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Դատողություն է անում տեղական միջավայրում գոյություն ունեցող արվեստի հուշարձանների մասին:
- Դատողություն է անում արվեստի մարդկանց և արվեստի նմուշների մասին, որոնցով հայտնի է իր թաղամասը, գյուղը, ավանը, քաղաքը, շրջանը:

Ծրագրի բովանդակություն

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Գիծ, գույն (գունային անիվի վրա հիմնական, բաղադրված և հակադիր գույների ճանաչում, սառը և տաք գույների տարբերում), ֆակտուրա, ձև, տրամադրության հաղորդում գծի, գույնի և ձևի միջոցով, նկարում հիմնականի առանձնացում, պատկերի բաշխում նկարային հարթության վրա:

Երաշխավորված տեսողական նյութ.

Գիծ՝ (օր., Ռ. Փետվիաշվիլու գրաֆիկան), ձև, գույն (գունային անիվ, հիմնական, բաղադրված և հակադիր, սառը և տաք)՝ օրինակ, Կլոդ Մոնե, Էդգար Դեգա, Անրի Մատիս, Վինսենտ Վան Գոգ, Պաբլո Պիկասո (երկնագույն և վարդագույն ժամանակաշրջաններ), Ռոբեր Դելոնե, Աուգուստ Մակե, Վասիլ Կանդինսկի, Ֆրանց Մարկ և այլք:

Աշխատանքում հիմնականի առանձնացում (չափ, գույն, ձև)՝ օր., համապատասխան նմուշներ հին Եգիպտոսի (օր., Թեբեի դամբարանի որմնանկարչություն «Որսորդություն Նեղոսի վրա», Տուտանհամոնի դամբարանի զարդատուփի նկարչություն «Առյուծների որս»), Միջագետքի, Անտիկ Հունաստանի արվեստից, Էլ Գրեկո («Աստծո որդու շապկի վիճակահանությունը») և այլն:

Նյութ և գործիք.

Մատիտ, կավճաներկ, գուաշ, ջրաներկ, ֆլումաստեր, կավիճ, ածուխ, գունավոր թուղթ, ամսագրեր, թերթեր, սովարաթուղթ, պլաստիլին, կավ, խմոր, մեղրամոմ, բնական և արհեստական նյութ (պարան, մետաղալար, խցան, խեցի, ծառի կեղև, ջրիմուռ, գույնզգույն քարեր, հուլունք, կոճակներ, տուփեր և այլն), վրձին, մկրատ, սոսինձ և այլն:

Տեխնիկա և ընթացակարգ.

Գեղանկարչություն, գրաֆիկա, ծեփում, ապլիկացիա, թղթով մոդելավորում, գույնզգույն թելերով պարզ կոմպոզիցիաների ստեղծում և նկարային հարթության վրա փակցնել, խեցիների գունավորում և պարզ կոմպոզիցիայի ստեղծում, ավազի վրա նկարել, սրած գունավոր մատիտների մնացած տաշեղիկներից պարզ պատկերների կազմում և նկարային հարթության վրա կոմպոզիցիայի ստեղծում: Խճանկար, կոլաժ, կառուցվածք, պատռել, ճմռթել, կտրել, սոսնձել և այլն:

Շրջակա միջավայրի դիտարկում.

Առարկաների, օբյեկտների կամ երևույթների հատկանիշների (գույնի, ձևի, ֆակտուրայի) արտացոլում, նաև, դիտարկման գործընթացում հարուցված զուգորդությունների, տրամադրությունների, սպավորությունների և ծագած գաղափարների հաղորդում:

Գաղափարների աղբյուրներ.

Տպավորություններ շրջակա միջավայրի դիտարկումից, երևակայություն, հեքիաթային, դիցաբանական, աստվածաշնչյան, գեղարվեստական ստեղծագործությունների կերպարներ և սյուժեներ, *օրինակ, հունական առասպելներ, Մանկական Աստվածաշունչ, առակներ, պատմվածքներ և այլն, համաշխարհային արվեստի նշանակալից նմուշների դիտում, գեղարվեստական և անիմացիոն ֆիլմեր («Պիտեր Պեն», «Ռոբին Հուդ», «Ծունան և Ծրուծունան», «Ուրուրների հարսանիքը», «Միզմարա», Դիսնեյի մուլտիպլիկացիոն ֆիլմերը և այլն), երաժշտական ստեղծագործություններ. Լյուդվիգ Վան Բեթհովենի «Լուսնի սոնատ», Անտոնիո Վիվալդիի «Տարվա ժամանակները», Կլոդ Դեբյուսի «Լուսնի լույսը», Պյոտր Չայկովսկու «Ճրթճրթանը», Սերգեյ Պրոկոֆևի «Պետյան և գայլը» և այլն, տարբեր տեսակի ներկայացումներ (թատերական, կրկեսային և այլն), տեղական և ընտանեկան տոնական ավանդույթներ:*

Ենթադրական թեմաներ.

«Ուրախ արձակուրդներ», «Ծովում», «Արևամուտ», «Անձրևոտ օր», «Տեսարան իմ պատուհանից», «Աշնանային անտառ», «Ծննդյան նվեր», «Գարուն եկավ», «Հեքիաթային թռչուն», «Թատրոնում», «Ճանապարհորդություն Աֆրիկայում», «Ջունգլիներ», «Ճանապարհորդություն գնացքով/ինքնաթիռով», «Ճանապարհորդություն տիեզերքում», «Երազանքների քաղաք», թեմաներ ըստ սեփական երևակայության, տեսարաններ և կերպարներ գեղարվեստական գրականությունից և այլն:

Աշխատանքային գործունեություն.

Մասնակցություն դասասենյակի, բակի մաքրման-բարեկարգմանը, ժամանակաչափի, անվտանգության կանոնների և հիգիենայի պահպանում:

Աշխատանքի ռազմավարություն.

Աշխատանք ինքնուրույն, գույզի հետ, թիմով:

Միջոցառումներ.

Դասարանային և դպրոցական ցուցահանդես, հանդիպում արվեստի գործչի հետ, հանդես, ներկայացում, էքսկուրսիաներ (թանգարաններ, պատկերասրահներ, հնէաբանական և ճարտարապետական հուշարձաններ և այլն)՝ մշակութային ժառանգությանը ծանոթանալու նպատակով:

Ներկայացում.

Աշխատանքը ներկայացնել (խոսել աշխատության մասին, գնահատել), հարցեր առաջադրել, պատասխան տալ, տպավորությունները, դիտարկումը, փորձը փոխանակել, հարգանք դրսևորել ուրիշի աշխատանքի և կարծիքի նկատմամբ, ուրիշի կարծիքը ուշադիր լսել, համապատասխան տերմիններ կիրառել:

Արվեստի ընկալում համատեքստում.

Կերպարվեստի և ճարտարապետության հայտնի նմուշների դիտում, ճանաչում և կոնկրետ բնագավառին հատկացում (ճարտարապետություն, գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, դեկորատիվ-կիրառական), աշխատանքի հատկացում ժանրին (նատյուրմորտ, բնանկար, դիմանկար, կենցաղային և այլն), բովանդակությունը կապել այլ առարկաներից անցած նյութի հետ, զրույց աշխատանքից ստացած տպավորությունների մասին, աշխատանքում հաղորդած տրամադրության ճանաչում, արվեստի տեղական հուշարձանների, գործիչների և նրանց ստեղծագործությունների ծանոթացում:

Երաշխավորված տեսողական նյութ.

Ճարտարապետություն՝ օրինակ, Իշթարի դարբասը, Կոլիզեոմ, Փարիզի Աստվածամոր տաճարը, Էյֆելյան աշտարակը և այլն: Վրաստանի տարբեր անկյունների ճարտարապետական հուշարձաններ՝ Ուփլիսցիխե, Վարձիա, Խերթվիսի, Էրեկլե երկրորդի պալատը Թելավիում և այլն:

Քանդակագործություն՝ օրինակ, հին աշխարհ՝ եգիպտական, հունական, հռոմեական:

Գեղանկարչություն՝ Քնեսոսի պալատի գեղանկարչություն, Պոմպեյի որմնանկարներ, Տոմագո Մագաչո, Մանդրո Բոտիչելի, Ռաֆայել Սանտ, Պոլ Սեզան, Պոլ Գոգեն, Նիկո Փիրոսմանի, Դավիթ Կակարաձե, Լադո Գուդիաշվիլի և այլք:

Գրաֆիկա՝ Լեոնարդո դա Վինչի, Ալբրեխտ Դյուրեր («Նապաստակ»), Անրի Մատիս, չինական և ճապոնական գրաֆիկա և այլն:

Կիրառական արվեստ.

Վրացական և հունական անտիկ խեցեղեն,, գորգեր, հնէաբանական արտեֆակտներ (օր., կոլխական զարդեր, մինչկոլումբյան Ամերիկայի և աֆրիկյան դիմակներ, ամանեղեն և այլ շինվածքներ:

IV դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներ՝ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
<p>Կերպ.կիր. IV.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է կիրառել կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները:</p> <p>Կերպ.կիր. IV.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, դիմում է տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի և կարող է ներկայացնել դրանց հնարավորությունները:</p> <p>Կերպ.կիր. IV.3.</p>	<p>Կերպ.կիր. IV.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և խոսել դրանցում պատկերված գաղափարների և կիրառված գեղարվեստական հնարների մասին:</p> <p>Կերպ.կիր. IV.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը ինքնարտահայտման և հաղորդակցության</p>	<p>Կերպ.կիր. IV.11. Աշակերտը կարող է միմյանց համեմատել արվեստի տարբեր բնագավառներ:</p> <p>Կերպ.կիր. IV.12. Աշակերտը կարող է կապել արվեստի աշխատանքի բովանդակությունը այլ առարկաներից անցած նյութի հետ:</p> <p>Կերպ.կիր. IV.13. Աշակերտը հետազոտում</p>

<p>Աշակերտը շրջակա միջավայրում դիտարկում է առարկաներ, օբյեկտներ, երևույթներ, դրանց միջև եղած կապերը և կարող է դրանք արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր. IV.4 . Աշակերտը կարող է զգացմունքներ և գաղափարներ արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր.IV.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր աշխատանք:</p> <p>Կերպ.կիր. IV.6. Աշակերտը կարող է համագործակցել ուրիշների հետ ինչպես սեփական, այնպես էլ ընդհանուր նպատակին հասնելու համար:</p>	<p>միջոց է:</p> <p>Կերպ.կիր. IV.9. Աշակերտը քննադատության ժամանակ կարող է հարգանքով վերաբերվել ուրիշի աշխատանքին և կարծիքին:</p> <p>Կերպ.կիր. IV.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:</p>	<p>է իր շրջապատում գոյություն ունեցող արվեստի նմուշները:</p>
---	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ.կիր.IV.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է կիրառել կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները:

- Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝
- Կիրառում է տարբեր տեսակի գծեր և շտրիխներ:
 - Գույների համադրմամբ ստանում է ցանկալի գույնը (օր. դեղնավուն կանաչ, կապտավուն կանաչ):

- Սպիտակի կամ սև գույնի ավելացմամբ փոխում է գույնի լույսի որակը (վառ-մուգ), տոնը (վարդագույն, յասամանագույն, երկնագույն և այլն):
- Ֆիզուրի, ձևի կամ զարդանախշի կրկնմամբ ստեղծում է ռիթմիկ կոմպոզիցիա:
- Ստեղծում է համաչափ և անհամաչափ աշխատանքներ կոլաժի, ապլիկացիայի, խճանկարի և այլ տեխնիկայի կիրառմամբ (թիթեռ, անտառ և այլն):
- Նկարի վրա աշխատելիս՝ հաղորդում է առարկայի ընդհանուր համաչափությունը (մարդը տնից փոքր է, տունը մեքենայից մեծ է և այլն):
- Ընտրում է նկարում առաջին և ետևի պլանը և կարող է հեշտությամբ պատկերել տարածության տարրերը (մոտ առարկաներն ավելի մեծ, իսկ հեռավոր առարկաները ավելի փոքր չափի են):

Կերպ.կիր.IV.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, դիմում է տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի և կարող է ներկայացնել դրանց հնարավորությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ստեղծում է տարբեր ֆակտուրա (տարբեր տեսակի նրբագծով, ստվարաթղթի կտորներով, դրոշմներով, ծածկված մակերևույթի քերծվածքով, ինչպես նաև մատներով, սպունգով և այլն):
- Մխալը վերածում է (թերություն, դեֆեկտ) աշխատանքի տարրի:
- Ստեղծում է դեկորատիվ և կիրառական աշխատանքներ (պնակներ, հուլունքներ, խաղալիքներ և այլն) տարբեր նյութով (գործվածք, ստվարաթուղթ, մետաղալար, երկրորդային ռեսուրսներ):

Կերպ.կիր. IV.3. Աշակերտը շրջակա միջավայրում դիտարկում է առարկաներ, օբյեկտներ, երևույթներ, դրանց միջև գոյություն ունեցող կապերը և կարող է դրանք արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Նկարում իր շրջապատը՝ քաղաքը, գյուղը, տրանսպորտային միջոցները (գնացքը, մեքենան, ինքնաթիռը), կամուրջներ, շենքեր, հրապարակներ և այլն:
- Նկարում է կենցաղային տեսարաններ (խաղողաքաղ, առավոտը ընտանիքում):
- Ջննում է, թե ինչպես է փոխվում օբյեկտի չափը դիտորդից հեռավորության համաձայն և արտացոլում է աշխատանքում:
- Արտացոլում է աշխատանքում բնության և բնության երևույթների դիտարկման արդյունքները (օր., համապատասխան գույնով պատկերում է գիշեր-ցերեկվա տարբեր հատվածներ, տարվա ժամանակը և եղանակը):

Կերպ.կիր. IV.4 . Աշակերտը կարող է զգացմունքներ և գաղափարներ արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ընտրում է պատկերավորման միջոցները՝ աշխատանքում մտահղացումը ավելի լավ հաղորդելու համար:
- Ստեղծում է երևակայական դեմքեր:
- Հաղորդում է կյանքում տեսած հետաքրքիր դրվագները և փորձում է արտացոլել սեփական զգացմունքները դրանց նկատմամբ:

Կերպ.կիր. IV.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր աշխատանք:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Պլանավորում է կատարելիք աշխատանքի հերթականությունը:
- Պահպանում է ժամանակաչափը ամեն տեսակի ակտիվությունների ժամանակ:
- Ընտրում է աշխատանքային գործիքները, նյութը, կարգավորում է դրանք սահմանված ժամանակահատվածում:
- Վերականգնում է վնասված իրերը և դպրոցական գույքը (գիրք, քարտեզ), ձևավորում է տարբեր դասարանային կամ դպրոցական միջոցառումներ, ստեղծում է շնորհավորագրեր և հրավիրատոմսեր, պատի թերթեր, ազդ՝ հանդեսի համար:
- Տարբեր նյութից պատրաստում է շրջանակներ, ծեփում է ծաղկամաններ, գավաթներ/սկահակներ, հյուսում է զամբյուղներ:
- Գունավոր կավճով նկարագարում է դպրոցի բակը:
- Դասավորում և գեղեցկացնում է դասասենյակը և օգնում է ավագներին դպրոցի բակը բարեկարգելու մեջ:

Կերպ.կիր. IV.6. Աշակերտը կարող է համագործակցել ուրիշների հետ ինչպես սեփական, այնպես էլ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է թիմային աշխատանքին (միասնական որոշում կայացնելու, գործառույթները բաշխելու գործում):
- Ընդգրկված է միասնական գեղարվեստական աշխատանքի ստեղծման գործընթացի մեջ:
- Դրսևորում է ուրիշների հետ համագործակցության նախաձեռնություն և հաճույքով օգնում է համադասարանցիներին:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր. IV.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և խոսել դրանցում պատկերված գաղափարների և կիրառված գեղարվեստական հնարների մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է սեփական և ուրիշների աշխատանքներում կիրառված գեղարվեստական հնարների և տարրերի մասին (ժանր, նյութ, տեխնիկա, ձև, ֆակտուրա և այլն):
- Նշում և հիմնավորում է՝ ինչը հավանում է, ինչը՝ ոչ,
- Ձգտում է գնահատել, թե որքանով կարողացավ աշխատանքում հաղորդել մտահղացումը:
- Արվեստի աշխատանքի մասին խոսելիս՝ կիրառում է համապատասխան տերմիններ անցած նյութից:
- Ներկայացնելու ժամանակ առաջադրում է հարցեր և համապատասխանաբար պատասխանում ուրիշի կողմից առաջադրված հարցերին:
- Աշխատանքները լսարանի առջև ներկայացնում է հեղինակի և/կամ մեկնաբանողի դերում:

Կերպ.կիր. IV.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը ինքնարտահայտման և հաղորդակցության միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Թվարկում է մի քանի պատճառ, թե ինչու են մարդիկ ստեղծում արվեստի գործեր:
- Խոսում է, թե ինչ էր ցանկանում հաղորդել աշխատանքում (երազանք, հույզ, կարծիք, տպավորություն):
- Դատում է արվեստի, որպես հափշտակության և մասնագիտության մասին:

Կերպ.կիր. IV.9. Աշակերտը քննադատության ժամանակ կարող է հարգանքով վերաբերվել ուրիշի աշխատանքին և կարծիքին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ուրիշի աշխատանքը գնահատելիս՝ օգտագործում է կոռեկտ արտահայտություններ:
- Վեճի ժամանակ սպասում է մինչև դիմացինն ավերտի իր խոսքը:
- Աջակցում, ոգևորում է համադասարանցիներին և բարյացակամ է նրանց նկատմամբ:

Կերպ.կիր. IV.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է թատերական ներկայացումներին, դասարանային և դպրոցական հանդեսներին և ցուցահանդեսներին:
- Հաճախում է թանգարաններ և ցուցահանդեսներ:
- Հաճախում է էքսկուրսիաների և ծանոթանում է մշակութային ժառանգությանը:

Կերպ.կիր. IV.11. Աշակերտը կարող է միմյանց համեմատել արվեստի տարբեր բնագավառներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Համեմատում է արվեստի տարբեր բնագավառների նմուշները պատկերավորման միջոցների, նյութի, տեխնիկայի համաձայն:
- Բնութագրում է բնագավառների հետ կապված մասնագիտությունները:
- Համեմատում է արվեստի բնագավառները, զգայական օրգանների վրա ներգործության համաձայն և ժամանակի տևողության տեսակետից:
- Հավաքում է տեղեկություն հայտնի ճարտարապետական հուշարձանների, գեղանկարչական աշխատանքների, քանդակների, դեկորատիվ-կիրառական և ժողովրդական ստեղծագործության նմուշների մասին և ծանոթացնում է համադասարանցիներին:

Կերպ.կիր. IV.12. Աշակերտը կարող է կապել արվեստի գործի բովանդակությունը այլ առարկաներից անցած նյութի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Համեմատում է միևնույն թեմայով ստեղծված արվեստի գործը և գրական ստեղծագործությունը:
- Գեղարվեստական ստեղծագործություններում ճանաչում է բնության երևույթները, տարբեր ռելիեֆը, բույսերը և այլն:
- Գեղարվեստական ստեղծագործությունում ճանաչում է տարբեր մասնագիտության մարդկանց:

Կերպ.կիր. IV.13. Աշակերտը հետազոտում է իր շրջապատում գոյություն ունեցող արվեստի նմուշները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Հավաքում և համադասարանցիներին իրազեկում է իր տարածաշրջանի (քաղաքի, գյուղի, բնակավայրի) արվեստի գործիչների և նրանց ստեղծագործությունների մասին:
- Ճանաչում և նկարագրում է իր տարածաշրջանում գտնվող պատմա-ճարտարապետական հուշարձանները:
- Դատում է այն մասին, թե ինչպես արտացոլվեց շրջապատը և դարաշրջանը արվեստի ստեղծագործության մեջ (աշխատանքում երևում են կոնկրետ տարածաշրջանի լանդշաֆտը, ճարտարապետական հուշարձանները, դարաշրջանին բնորոշ իրերը և այլն):

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Գիծ (շտրիխ), գույն (գույների համադրմամբ ցանկալի գույնի ստացում, սպիտակի կամ սև գույնի հավելմամբ գույնի լույսի որակի փոփոխում (վառ-մուգ), տոնայնություն (վարդագույն, յասամանագույն, երկնագույն և այլն), ֆակտուրա, տրամադրության հաղորդում գծի և գույնի միջոցով, ընդհանուր համաչափությունների հաղորդում, տարածություն հաղորդելու փորձ (առաջին, միջին, ետևի պլանի ընտրություն պատկերի չափի, շեշտակի և աղոտ գույների միջոցով): Համաչափություն, անհամաչափություն;

Երաշխավորված տեսողական նյութ.

Գիծ՝ (շտրիխ)՝ օր., Լեոնարդո դա Վինչիի, Ռեմբրանդտ Հարմենս Վան Ռեյնի և Վինսենտ Վան Գոգի գրաֆիկական գործեր և այլն:

Գույների համադրմամբ ցանկալի գույնի (օր., դեղնավուն կանաչ, կապտավուն կանաչ) ստացում, սպիտակի կամ սև գույնի հավելմամբ գույնի լույսի որակի փոփոխում (վառ-մուգ), տոնայնություն (վարդագույն, յասամանագույն, երկնագույն և այլն)՝ օր., Օդիլոն Ռեդոնի «Պեզաս», «Նժար», «Մուսա Պեզասի մասին», Անրի Ռուսոյի «Վագրը արևադարձային փոթորկում», Կլոդ Մոնեի «Այգի Ժիվերնում», «Մաքսավորի տունը Վարենժևիլում», «Պառլամենտ. արևի էֆեկտը ջրի վրա», Վինսենտ Վան Գոգի «Զիթապտղի այգին», «Աստղալից գիշեր», «Կեսօրյա քուն» և այլն:

Նյութ և գործիք.

Մատիտ, կավճաներկ, գուաշ, ջրաներկ, մարկեր, ֆլումաստեր, թանաք, ածուխ, կավիճ, գունավոր թուղթ, ստվարաթուղթ, ամսագիր-թերթեր, պլաստիլին, կավ, գործվածք, պարան, մետաղալար, հուլունք, կոճակ, խեցի, գույնզգույն քարեր, ծառի կեղև, ջրիմուռ, խցան, ամպ, վրձին, ձող, մետաղի, պլաստմասսայե տուփեր, այլ բնական և արհեստական նյութեր:

Տեխնիկա և ընթացակարգ.

Գեղանկարչության, գրաֆիկայի տարբեր տեխնիկա, դրոշմ, ծեփում, ապլիկացիա, թղթով մոդելավորում, խճանկար, կոլաժ, կառուցվածք, կտրել, սոսնձել, ծոմոել, ոլորել, հյուսել:

Գաղափարների արտահայտում.

Առարկաների միջև կապերի, գուգորությունների հաղորդում, գաղափարների աղբյուրներ, երևակայություն, արվեստի հայտնի նմուշներ համաշխարհային արվեստի պատմությունից, *անտիկ աշխարհ Եզիպտոս, Միջագետք, Հունաստան, Միջին դարերի քրիստոնեական արվեստ, Վերածնունդ, XX դարի ընտիր արվեստի նմուշներ (օրինակ, Պաբլո Պիկասո, Ջորջ Բրակ, Անրի Մատիս, Պաուլ Կլեե, Գուստավ Կլիմտ և այլք)*

տեղական ճարտարապետական կոթողներ, տպավորություններ շրջապատը դիտարկելուց, գեղարվեստական գրականություն (ասացվածքներ, առակներ, պատմվածքներ, Աննա Կալանդաձեի, Լադո Ասաթիանիի և այլոց բանաստեղծություններ), երաժշտություն (վրացական և արտասահմանյան բանահյուսություն, Կամիլ Մեն-Սանս, Մորիս Ռավել, Էդուարդ Գրիգ), ֆիլմ, անիմացիա (օր., Դիսնեյի մուտիպլիկացիոն ֆիլմերը), տարբեր տեսակի (օր., թատերական կամ կրկեսային) ներկայացումներ, տեղական տոնական ավանդույթներ, մանկական խաղեր, կենցաղային տեսարաններ:

Ենթադրյալ թեմաներ.

«Ամառվա մեկ օր», «Ձմեռային արձակուրդ», «Առավոտ», «Իմ ընտանիքը», «Ընտանեկան ավանդույթ», «Ծննդյան օր», «Թիթեռ», «Իմ սիրելի կենդանին», «Իմ դպրոցը», «Հեքիաթների աշխարհում», «Կախարդական անտառ», «Նախկինում և ներկայում», «Ճանապարհորդություն ժամանակում», սերիա. «Ճանապարհորդություն Երկրագնդի շուրջը», «Ճանապարհորդություն շոգենավով/ինքնաթիռով, գնացքով...», «Կայարան», «Օդանավակայան», «Նավակայան», «Գրադարան», «Ապագայի տրանսպորտը», «Թատրոնում», «Փողոցում», «Մարզական մրցույթ», «Արտասովոր թռչող սարք» և այլն: (Կարող են լինել տեղական արտադրությունը, տեղական ճարտարապետական կոթողը, նաև տեղական և արտասահմանյան ավանդույթն արտացոլող թեմաներ) ինչպես նաև թեմաներ ըստ սեփական երևակայության:

Աշխատանքային գործունեություն.

Կատարելիք աշխատանքի հերթականության պլանավորում, ժամանակաչափի, հիգիենայի և անվտանգության կանոնների պահպանում, մասնակցություն դասասենյակի, բակի մաքրման-բարեկարգմանը, վնասված իրերի և դպրոցական գույքի (գիրք, քարտեզ) վերականգնում, տարբեր դասարանական կամ դպրոցական միջոցառումների ձևավորում, շնորհավորագրերի և հրավիրատոմսերի, շրջանակների, պնակների, հովհարի, պատի թերթի, հանդեսի ազդի պատրաստում և այլն:

Աշխատանքի ռազմավարություն.

Աշխատանք ինքնուրույն, զույգի հետ, թիմով:

Միջոցառումներ.

Դասարանային և դպրոցական ցուցահանդես, հանդես, ներկայացում, էքսկուրսիաներ թանգարաններ, պատկերասրահներ, արվեստագետի արհեստանոց, քաղաքից դուրս՝ մշակութային ժառանգության հետ ծանոթանալու նպատակով (հնէաբանական և ճարտարապետական հուշարձանների դիտում):

Ներկայացում.

Աշխատանքը ներկայացնել (խոսել աշխատության մասին, գնահատել), հարցեր առաջադրել, պատասխանել, տպավորությունները, դիտարկումը, փորձը փոխանակել, հարգանք դրսևորել ուրիշի աշխատանքի և կարծիքի նկատմամբ, ուրիշի կարծիքը ուշադրությամբ լսել, համապատասխան տերմիններ կիրառել:

Արվեստի ընկալում համատեքստում.

Կերպարվեստի և ճարտարապետության հայտնի նմուշների դիտում, ճանաչում և հատկացում կոնկրետ բնագավառին, ժանրին, բնագավառների համեմատում՝ յուրաքանչյուրի հնարավորությունների հաշվառումով, բովանդակությունը կապել այլ առարկաներից անցած նյութի հետ՝ գրականություն, բնություն, գրույց տպավորությունների մասին, տրամադրության ճանաչում, տեղական շրջապատում գոյություն ունեցող արվեստի նմուշների հետազոտում (տեղեկության հավաքում թաղամասում, քաղաքում, գյուղում, շրջանում բնակվող արվեստի գործիչների և այն մասին, թե ինչպես է արտացոլվել շրջապատը և դարաշրջանը նրանց ստեղծագործություններում):

Երաշխավորված տեսողական նյութ.

Ճարտարապետություն՝ Վրաստանի տարբեր տարածաշրջանների ճարտարապետական կոթողներ, օրինակ, Նեկրեսի, Բոլնիսի Սիոնի, Հին Շուամթա և այլն, եգիպտական բուրգեր, Զիկուրատ, Էրեխթեոն, Թաջ-Մահալ, Պիզայի աշտարակ, Սվանական աշտարակ և այլն:

Քանդակագործություն՝ անտիկ աշխարհ. եգիպտական, հունական, հռոմեական, գոթական, Վերածնունդ, ժամանակակից (օր., Ֆիդիաս, Միքելանջելո Բուոնարոտի, Օգյուստ Ռոդեն, Էդգար Դեգա, Ջակոմետի, Կլաս Օլդենբուրգ, Յակոբ Նիկոլադե, Մերաբ Բերձենիշվիլի և այլք):

Գեղանկարչություն՝ Ջոտո դի Բոնդոնե, Տոմազո Մագաչո, Ռաֆայել Սանտ, Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո Բուոնարոտի, Վերմեեր, Էլ Գրեկո, Դիեգո Վելասկես, Նիկո Փիրոսամանի, Դավիթ Կակաբաձե, Լադո Գուդիաշվիլի, Շալվա Քիքոձե, Էլենե Ախվիեդիանի, Քեթևան Մադալաշվիլի և այլք:

Գրաֆիկա՝ օրինակ, Անրի դե Տուլուզ Լոտրեկ, Պաբլո Պիկասո, չինական և ճապոնական գրաֆիկա և այլն:

Պատկերագրողումներ. Անտուան դե Սենտ-Էզգյուպերի՝ «Փոքրիկ արքայազնը», Ա.Դ. Ռեիպոլսկիի Շառլ Պեռո «Կապտամորուսը», Սերգո Քոբուլաձեի «Վագրենավորը» և այլն:

Դեկորատիվ-կիրառական արվեստ՝ օրինակ, կովկասյան և արևելյան գորգեր, հին չինական ձենապակի: Հին, ժամանակակից վրացական խեցեղեն, կայք-էջից <http://clayoffice.ge/> և այլն:

V դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներ՝ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
<p>Կերպ.կիր. V.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները:</p> <p>Կերպ.կիր. V.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, դիմում է տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի և կարող է դրանք ստեղծագործաբար կիրառել:</p> <p>Կերպ.կիր. V.3. Աշակերտը շրջակա միջավայրում գննում է առարկաները, օբյեկտները, երևույթները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը և</p>	<p>Կերպ.կիր. V.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և ստացած գիտելիքի հիման վրա դատել գեղարվեստական աշխատության մասին:</p> <p>Կերպ.կիր. V.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը ինքնարտահայտման և հաղորդակցության միջոց է:</p> <p>Կերպ.կիր. V.9. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:</p>	<p>Կերպ.կիր. V.10. Աշակերտը կարող է կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր բնագավառի նմուշները կապել պատմական, կրոնական և սոցիալական համատեքստի հետ:</p> <p>Կերպ.կիր. V.11. Աշակերտը կարող է արվեստի գործերի բովանդակությունը կապել պատմության և մշակույթի հետ:</p> <p>Կերպ.կիր. V.12. Աշակերտը ճանաչում է վրացական արվեստը և արվեստի գործիչներին:</p> <p>Կերպ.կիր. V.13.</p>

<p>կարող է դրանք արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր. V.4 . Աշակերտը կարող է զգացմունքներ և գաղափարներ արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր.V.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանք:</p> <p>Կերպ.կիր. V.6. Աշակերտը կարող է համագործակցել ուրիշների հետ ինչպես սեփական, այնպես էլ ընդհանուր նպատակին հասնելու համար:</p>		<p>Աշակերտը գիտակցում է, թե ինչ դեր է կատարում արվեստը հասարակության կյանքում:</p>
---	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ.կիր.V.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները:

- Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը`
- Տարբեր տեսակի նրբագծերով և էֆեկտներով հաղորդում է տրամադրությունը և ստեղծում է ֆակտուրաներ:
 - Ձգտում է լույս-ստվերի, ցուլքի և ընկած ստվերի միջոցով պատկերել առարկաների ծավալը:
 - Ստեղծում է հարթության դեկորատիվ կոմպոզիցիաներ:

- Աշխատանք ստեղծելիս՝ կիրառում է կոմպոզիցիոն բաշխման հիմնական հնարները, օր., հավասարակշռություն, դիտակետ (օր., ուղևորություն օդապարիկով, ներքնից և վերնից տեսած աշխարհ, առարկաներ և այլն):
- Դրսևորում է հեռանկարի օրենքների տարրական/նախնական գիտելիք՝ առաջին և ետին պլանի կիրառմամբ:
- Տարածություն պատկերելու համար՝ կիրառում է կիսատոնայնություն (առջևի պլան՝ շեշտակի, ետին պլան՝ աղոտ):
- Կիրառում է գույնի աստիճանավորում:
- Պատկերում է մարդու մարմինը՝ հիմնական համամասնությունների հաշվառմամբ (պարզորոշ):
- Տարբեր գեղարվեստական հնարներով աշխատանքում հաղորդում է դինամիկան (մարմինների շարժում, քամի):
- Մխալը վեր է ածում (բացթողում, դեֆեկտ) աշխատանքի տարրի:

Կերպ.կիր.V.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, դիմում է տարբեր նյութի, տեխնիկայի և ընթացակարգի և կարող է դրանք ստեղծագործաբար կիրառել:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Անցկացնում է փորձ ծանոթ նյութով (տարբեր պատկեր, զարդանախշ ստեղծում է կավի, ապակու, մետաղի, փայտի, գործվածքի վրա ներկով) և ստանում է դրոշմվածքներ:
- Համակարգչի միջոցով ստեղծում է պարզ պատկերներ, զարդանախշեր, տարբեր տեսակի էֆեկտ:
- Անձամբ ընտրում է նյութը և տեխնիկան (օր., գործվածքը նկարում է գուաշով և տեմպերա ներկերով)՝ աշխատանքում ցանկալի էֆեկտի հասնելու համար:

Կերպ.կիր. V.3. Աշակերտը շրջակա միջավայրում զննում է առարկաները, օբյեկտները, երևույթները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը և կարող է դրանք արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ջննում է, թե ինչպես է փոխվում օբյեկտի չափը, գույնը, շեշտակիությունը՝ դիտողից հեռավորության համաձայն և արտացոլում է աշխատանքում:
- Նկարում է դիմանկար, նատյուրմորտ և բնանկար բնօրինակից և հիշողությամբ՝ ավելի շատ մանրամասներ կիրառելով:
- Բազմաթիվ մանրամասներ կիրառելով՝ պատկերում է ինքն իրեն և ուրիշների տարբեր իրատեսական և մտացածին իրավիճակներում:

Կերպ.կիր. V.4. Աշակերտը կարող է զգացմունքներ և գաղափարներ արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ընտրում է պատկերավորման միջոցները և նյութը՝ աշխատանքում մտահղացումը ավելի լավ հաղորդելու համար:
- Երևակայությամբ ստեղծում է կերպարներ, գործող անձինք:
- Արտացոլում է իր կյանքի հետաքրքիր կամ նշանակալից պահերը և փորձում է հաղորդել սեփական զգացմունքները դրանց նկատմամբ:
- Աշխատանքում հաղորդում է որոշակի գաղափար (օրինակ, ստեղծում է ցուցապաստառ Էկոլոգիական կամ այլ թեմայով):
- Պատկերում է մերձավոր մարդկանց (ընտանիքի անդամներ, ընկերներ և այլք), սիրելի գրական հերոսների և ձգտում է հաղորդել դրանց նկատմամբ իր վերաբերմունքը:

Կերպ.կիր.V.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանք:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կոնկրետ խնդիրը լուծելու համար՝ պլանավորում է կատարելիք աշխատանքի հերթականությունը:
- Ստեղծում է դեկորատիվ կամ կիրառական գործեր:
- Կատարում է դասարանի կամ իր սենյակի ինտերիերի էսքիզը:
- Ստեղծում/ձևավորում է դպրոցական վահանակները:
- Դեկորատիվ ձևավորում է դպրոցի բակի հատվածը:
- Կազմում և նորոգում է դպրոցական կամ դասարանային գրադարանի գրքերը:
- Նկարում և պատրաստում է թատերական հագուստի և դեկորացիայի դետալներ (գլխարկ, դիմակ):

Կերպ.կիր. V.6. Աշակերտը կարող է համագործակցել ուրիշների հետ ինչպես սեփական, այնպես էլ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Համագործակցում է ուրիշների հետ՝ ընդհանուր հիմնախնդիրը լուծելու համար:
- Պահանջում է օգնություն՝ սեփական գաղափարը իրականացնելու համար:
- Օգնում է մյուսներին, կոնկրետ խնդիրը կատարելու գործում, և անհրաժեշտության դեպքում՝ պահանջում է նրանցից օգնություն:
- Մասնակցում է միասնական որոշում կայացնելուն:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր. V.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և ստացած գիտելիքի հիման վրա դատել գեղարվեստական աշխատության մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է սեփական և/կամ ուրիշների աշխատանքների մասին և հիմնավորում է, թե ինչու է հավանում կամ չի հավանում դրանցից որևէ մեկը:
- Քննադատելու ժամանակ հարգանքով է վերաբերվում ուրիշի աշխատանքին և կարծիքին:
- Խոսելիս կիրառում է համապատասխան տերմիններ:
- Համապատասխանաբար է լսարանի կողմից առաջադրված հարցերին:
- Ճանաչում է պատմությունից և գրականությունից անցած թեմաները և կերպարներին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության մասին:
- Դատում է աշխատանքներում կիրառած գեղարվեստական հնարների և տարրերի մասին (ժանր, տեխնիկա, նյութ, կոլորիտ, կոմպոզիցիոն բաշխման սկզբունք և այլն):

Կերպ.կիր. V.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը ինքնարտահայտման և հաղորդակցության միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է արվեստի տարբեր նմուշներով հարուցված տրամադրությունների և զգացմունքների մասին:
- Խոսում է այն մասին, թե ինչ ազդեցություն է գործում իր վրա այս կամ այն գույնը, գիծը, բիծը, ձևը:
- Խոսում է, որ տարբեր նյութերով և տեխնիկայով կարելի է հաղորդել տարբեր զգացմունքներ և գաղափարներ:

Կերպ.կիր. V.9. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Մասնակցում է ցուցահանդեսի:
- Մասնակցում է ներկայացման բեմադրությանը:
- Մասնակցում է տարբեր տեսակի ակցիաների (օր., բնապահպանական):
- Հանդիպում է արվեստի ակնառու գործիչների հետ:

Ուղղություն. Արվեստի ընկալում համատեքստում

Կերպ.կիր. V.10. Աշակերտը կարող է կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր բնագավառի նմուշները կապել պատմական, կրոնական և սոցիալական համատեքստի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է հայտնի ճարտարապետական հուշարձանների գործառնության մասին (պաշտպանական, պաշտամունքային, կենցաղային ճարտարապետություն և այլն):
- Արտահայտում է կարծիք, թե որ սոցիալական շերտին է եղել հատկացված կիրառական արվեստի այս կամ այն նմուշը:
- Դատում է արվեստի տարբեր բնագավառի առանձին նմուշի նշանակման մասին (կերպարվեստ, դեկորատիվ, կիրառական, կրոնական, գեղագիտական, տեղեկատվական):

Կերպ.կիր. V.11. Աշակերտը կարող է արվեստի գործերի բովանդակությունը կապել պատմության և մշակույթի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Արվեստի նմուշներում ճանաչում է պատմական կամ գրական կերպարներին և պատմական իրադարձությունները:
- Հավաքում է տեղեկություն որևէ պատմական իրադարձության հետ կապված պատմական նմուշների մասին:
- Գտնում և համեմատում է տարբեր մշակույթներում միևնույն թեմայով ստեղծված աշխատանքները:

Կերպ.կիր. V.12. Աշակերտը ճանաչում է վրացական արվեստը և արվեստի գործիչներին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Դատում է նյութական մշակույթի հուշարձանների մասին, որոնք տեսել է և արտահայտում է իր վերաբերմունքը:
- Հավաքում և դասարանի առջև ներկայացնում է տեղեկություն վրացական քանդակագործության և ճարտարապետության մի քանի նմուշների մասին:
- Գտնում է տեղեկություն մի քանի հայտնի վրաց նկարչի, քանդակագործի մասին և ներկայացնում է դասարանի առջև:

Կերպ.կիր. V.13. Աշակերտը գիտակցում է, թե ինչ դեր է կատարում արվեստը հասարակության կյանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Անվանում է իր քաղաքում/շրջանում/երկրում եղած մշակութային հաստատությունները (թանգարան, պատկերասրահ, կինոթատրոն) և դատում է դրանց նշանակության մասին:
- Հավաքում է տեղեկություն և վերլուծում է, թե արվեստի ասպարեզում ով և ինչով է բարձրացրել իր քաղաքի/գյուղի/երկրի անունը:

- Հավաքում է տեղեկություն և իրազեկում է համադասարանցիներին հայտնի արվեստագետի ստեղծագործության մասին և դատում է դրա նշանակության շուրջ:

Ծրագրի բովանդակություն

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Գիծ, գույն (հակադրական, աստիճանական), լույս-ստվեր, ֆակտուրա (տարբեր ֆակտուրայի ստեղծում), ձև, ծավալ, (տրամադրության հաղորդում գծի կամ գույնի, տարբեր տեսակի նրբագծերի միջոցով, ամբողջական և ընդհանուր համաչափությունների հաղորդում), տարածություն (հորիզոնի գիծ, հեռանկար, դիտակետ, առաջին և ետին պլանի տարբերում առարկայի չափի և տոնայնության միջոցով), համաչափություն, ռիթմ, հավասարակշռություն, ստատիկա և դինամիկա, կոմպոզիցիոն բաշխման հիմնական հնարներ:

Երաշխավորված տեսողական նյութ.

Գիծ՝ Անրի Մատիս (օր., «Թեմաներ և վարիացիաներ, Անել», Շառլ Բոդլերի դիմանկարը, «Մեծ դեմք I, Լիդիա») Պաբլո Պիկասո (օր., «Խաղաղության աղավնի», «Կորիդա», «Դոն Բիշոտ»), Ռուսոդան Փետլիաշվիլիի գրաֆիկար, արևելյան և չինական գեղագրության նմուշներ և այլն:

Գույն՝ Փայուսի դիմանկարը, Պիեռո Դելա Ֆրանչեսկա, Պիտեր Բրեյգել, Ֆրանս Հալս, Տերբորխ, վաղ (փոքր) հոլանդացիներ, իմպրեսիոնիստներ և ետիմպրեսիոնիստներ (Էդուարդ Մանե, Կլոդ Մոնե, Ալֆրեդ Սիսլեյ, Ժորժ Սերա, Պոլ Սեզան, Վինսենտ Վան Գոգ), վրաց նկարիչներ՝ Դավիթ Կակաբաձե, Էլենե Ախվիլեդիանի, Մոսե Թոփձե, Ալեքսանդրե Ցիմակուրիձե, Դավիթ Գվելեսիանի, Գուրամ Քութաթելաձե, Էդմունդ Կալանդաձե և այլք:

Կոմպոզիցիոն բաշխման հիմնական միջոցներ՝ Լեոնարդո Դա Վինչի «Խորհրդավոր ընթրիքը» (հեռանկար, համաչափություն, հավասարակշռություն), Ռաֆայել Սանտի «Ասպետի երազը» (համաչափություն, հավասարակշռություն), Էդգար Դեգայի «Բալետի պարուհիները» (անհամաչափություն), եզիպտական որմնանկարչություն, Ֆիդիասի պանաթենացիների երթը (ֆրիզային կոմպոզիցիա, ռիթմ), Փիրոսմանի՝ «Ձկնորս», «Բակապան», Խնջույքի տեսարաններ (ստատիկա), Անրի Մատիսի «Պար», Ջակոմո Բալայի «Աղջիկը պատշգամբում», «Դնչակապով շան շարժումների ռիթմը» (դինամիկա) և այլն:

Դիտակետ՝ Պիտեր Բրեյգել «Որսորդները ձյան վրա», Կլոդ Մոնե «Կապուցիների ծառուղին Փարիզում», Դավիթ Կակաբաձե՝ Իմերեթիի բնանկարներ, Վան Գոգի «Ձկնորսների նավեր», (Հորիզոնի գիծ): Ռենե Մագրիտ «Մարդու վիճակը» և այլն:

Նյութ և գործիք.

Մատիտ, կավճաներկ, գուաշ, ջրաներկ, տեմպեր, ածուխ, կավիճ, գունավոր թուղթ, ստվարաթուղթ, տպագրական/պոլիգրաֆիական արտադրանք, պլաստիլին, կավ, գործվածք, պարան, մետաղալար, մետաղյա, պլաստմասսայե, ստվարաթղթի տուփեր, բնական (հատիկայիններ խճանկարի համար, իսցան, տերևներ դրոշմահետքի համար) և արհեստական (այդ թվում, երկրորդական) նյութ, փորձեր տարբեր նյութով և գործիքով:

Տեխնիկա, ընթացակարգ և գործընթացներ.

Գեղանկարչության, գրաֆիկայի տեխնիկաներ (նրբագիծ, բիծ, դրոշմահետք, ծեփում, ապլիկացիա, թղթի աշխատանքներ, խճանկար, կոլաժ, մոդելավորում, կոնստրուկցիա, համակարգչային գրաֆիկա, կտրել, սոսնձել, քերծել, ծոմոել, ոլորել, հյուսել:

Գաղափարների արտահայտում.

Հույզերով հարուցած զուգորդություններ և տպավորություններ, տրամադրության ստեղծում պարզ դիմախաղի (միմիկայի) և ձեռածության (ժեստիկուլյացիայի) կիրառմամբ:

Գաղափարների աղբյուրներ.

Առարկաների միջև կապերի, զուգորդությունների հաղորդում, գաղափարների աղբյուրներ, երևակայություն, արվեստի հայտնի նմուշներ համաշխարհային արվեստի պատմությունից, տեղական ճարտարապետական կոթողներ, տպավորություններ շրջակա միջավայրի դիտարկումից, պատմություն, դիցաբանություն, գեղարվեստական գրականություն (ասացվածքներ, առակներ, պատմվածքներ), երաժշտություն (վրացական և արտասահմանյան բանահյուսություն), ֆիլմ, անիմացիա, թատերական ներկայացում, տեղական հանդիսությունների ավանդույթներ, կենցաղային դրվագներ, իրականում տեղի ունեցած հասարակական երևույթներ, անձնական նշանակություն ունեցող փաստեր և այլն:

Ենթադրյալ թեմաներ.

«Մայրամուտ ծովում», «Աշնան/գարնան անձրև», «Խաղողաքաղ», «Հայրենի անկյուն», «Քարե դարի մարդ», «Դինոզավրեր», «Դիցաբանական հերոսներ», «Շամիրամի կախովի այգիներ», «Միրելի պատմական հերոս», «Երկրագունդը իմ տուն», «Հավատարմություն», «Էքսկուրսիա», «Ճանապարհորդություն օդապարիկով» և այլն:

Աշխատանքային գործունեություն.

Դեկորատիվ և կիրառական առարկաներ, գրքեր (կազմում, նորոգում), թատերական ռեկվիզիտ (հագուստի և դեկորացիայի դետալներ), աշխատանք՝ ինքնուրույն , գույզի հետ, խմբային:

Հաղորդակցություն.

Աշխատանքի ներկայացում (դատողություն մտահղացման, կատարման գործընթացի, աշխատության զարգացվելիք և ուժեղ կողմերի, այլ առարկաների հետ կապի մասին), հարցերի առաջադրում, պատասխան տալ, տպավորությունների, դիտարկման, փորձի փոխանակում, վերաբերմունքի արտահայտում, գնահատում և դրա հիմնավորում, քննադատության ժամանակ հարգանքի դրսևորում ուրիշի աշխատանքի և կարծիքի նկատմամբ, համապատասխան տերմինների կիրառում, գրույց աշխատանքից ստացած տեղեկության մասին, դասարանային և դպրոցական ցուցահանդես, բեմադրություն, ակցիա, էքսկուրսիաներ թանգարաններ, պատկերասրահներ, քաղաքից դուրս:

Արվեստի ընկալում համատեքստում.

Կերպարվեստի հայտնի նմուշների դիտում, ճանաչում, կապում պատմական, կրոնական և սոցիալական համատեքստի հետ, գրույց դեկորատիվ-կիրառական առարկաների նշանակության մասին, արվեստի դերի մասին հասարակական վայրերում, բովանդակության կապում պատմության, մշակույթի հետ, տեղեկության հավաքում իր քաղաքում, գյուղում, շրջանում բնակվող արվեստի գործիչների և նրանց ստեղծագործության մասին:

Երաշխավորված տեսողական նյութ.

Գեղանկարչություն և գրաֆիկա՝ Էժեն Դելակրուա, Դոմինիկ Էնգր, Ժակ-Լուի Դավիթ, Օնորե Դոմյե, Ուիլիամ Տերներ, Ֆրանսիսկո Գոյա, Կամիլ Պիսարո, Պոլ Սեզան, Անրի դե Տուլուզ Լոտրեկ, Ժորժ Սերա, Պոլ Սինիակ, Անդրե Դերեն, Մորիս դե Վլամինկ և այլն.

Քանդակագործություն՝ օր., Հարության կղզու քարե քանդակներ, Աբու –Միմբելի Ռամզեսի կոթողը, Չինաստանի Տերակոտի մարտիկները, հունական հնագույն և դասական քանդակներ, շումերական քանդակներ, Միքելանջելոյի քանդակներ, Ռաշմորի լեռան քարածայրում փորված դիմանկարներ, Ազատության քանդակ:

Բարձրաքանդակներ՝ Բոլնիսի Սիոն, Մցխեթայի Ջվարի, Նիկործմինդա և այլն:

Ճարտարապետություն՝ Մթոունհենց, Պետրա, Սանտա-Մարիա դել Ֆիորեի տաճար, Վրաստանի տարբեր տարածաշրջանի ճարտարապետական կոթողներ (Գուրջաանի Ամենասուրբ, Կվետերա, Խախուլի, Ռկոնի և այլն) ժամանակակից ճարտարապետության նմուշներ. օր. Կուալա-Լումպուրի երկվորյակ երկնաքերեր և այլն:

Կիրառական արվեստ.

Բեդիյի սկահակը, Մամայի տոնդոն, Թամար թագուհու խաչը, Բրոնզե դարաշրջանի վրացական արտեֆակտներ, շումերական, եգիպտական, Միջագետքի, անտիկ դարաշրջանի, վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի կիրառական արվեստի նմուշներ, զինանիշագիտության պարզ օրինակներ, չինական մետաքս, ճենապակի, էտրուսկյան խեցու նմուշներ, պարսկական, իսպանական, հոլանդական խեցեղեն սալիկներ, արևելյան գորգեր և այլն:

VI դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներ՝ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
--	------------------------------------	-------------------------------

<p>Կերպ.կիր. VI.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները:</p> <p>Կերպ.կիր. VI.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված ընտրել և ստեղծագործաբար կիրառել տարբեր նյութ, տեխնիկա և ընթացակարգ:</p> <p>Կերպ.կիր. VI.3. Աշակերտը շրջակա միջավայրում գննում է օբյեկտների միջև կապերը և կարող է դրանց յուրահատկությունները հաղորդել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր. VI.4 . Աշակերտը ընկալում է աշխարհը, որպես բազմազան զգացմունքների և գաղափարների աղբյուր, և կարող է դրանք արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր. VI.5.</p>	<p>Կերպ.կիր. VI.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և այլ առարկաներից ստացած գիտելիքի հիման վրա դատել գեղարվեստական ստեղծագործության մասին:</p> <p>Կերպ.կիր. VI.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը ինքնարտահայտման և հաղորդակցության միջոց է:</p> <p>Կերպ.կիր. VI.9. Աշակերտը կարող է պլանավորել և մասնակցել տարբեր տեսակի միջոցառումների:</p>	<p>Կերպ.կիր. VI.10. Աշակերտը կարող է կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր բնագավառի նմուշները կապել պատմական, կրոնական և սոցիալական համատեքստի հետ:</p> <p>Կերպ.կիր. VI.11. Աշակերտը կարող է արվեստի գործերի բովանդակությունը կապել պատմության և մշակույթի հետ:</p> <p>Կերպ.կիր. VI.12. Աշակերտը ճանաչում է վրացական արվեստը և արվեստի գործիչներին:</p> <p>Կերպ.կիր. VI.13. Աշակերտը գիտակցում է, թե ինչ դեր է կատարում արվեստը հասարակության կյանքում:</p>
---	---	---

<p>Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանք:</p> <p>Կերպ.կիր. VI.6.</p> <p>Աշակերտը կարող է թիմում աշխատել՝ ստեղծագործական և կազմակերպական հիմնախնդիրներ լուծելու համար:</p>		
---	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ.կիր.VI.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված կիրառել կերպարվեստի տարրերը և սկզբունքները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Տարբեր տեսակի նրբագծով և էֆեկտներով հաղորդում է տրամադրություն և ստեղծում է ֆակտուրաներ:
- Կիրառում է գույների աստիճանավորում:
- Կիրառում է հակադիր և մերձավոր գույներ:
- Լույս-ստվերի, ցուլի և ընկած ստվերի միջոցով պատկերում է առարկաների ծավալը:
- Ստեղծում է բարդ զարդանախշ ձևերի, գույների, գծերի, նրբագծերի կրկնությամբ:
- Չննում և արտացոլում է առարկաների հարաբերակցությունը և համաչափությունը (պարզ):
- Նկարում է տարածությունը հեռանկարի հիմնական կանոնների կիրառմամբ (կշիռ, միջին և ետին պլան, կիսատոներ):
- Ստեղծում է բազմապատկեր կոմպոզիցիաներ:

Կերպ.կիր.VI.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված ընտրել և ստեղծագործաբար կիրառել տարբեր նյութ, տեխնիկա և ընթացակարգ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ստեղծում է փոքր չափի ձևեր՝ գտնված տարբեր նյութերով:
- Կատարում է գրաֆիկական աշխատանք տարբեր նյութով (տուշ, թանաք, ածուխ և այլն):
- Համակարգչի միջոցով ստեղծում է պարզ կոմպոզիցիաներ:
- Կոնկրետ տվյալի համաձայն, անձամբ ընտրում է նյութը և տեխնիկան:

Կերպ.կիր. VI.3. Աշակերտը շրջակա միջավայրում գտնում է օբյեկտների միջև կապերը և կարող է դրանց յուրահասկությունները հաղորդել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Նկարում է դիմանկարներ, նատյուրմորտ և բնանկար բնօրինակից և հիշողությամբ՝ կիրառելով բնորոշ նշանները:
- Պատկերում է ինքն իրեն և ուրիշների՝ իրատեսական կամ մտացածին իրավիճակում՝ կիրառելով տարբեր բնորոշ նշաններ, մանրամասեր:

Կերպ.կիր. VI.4 . Աշակերտը ընկալում է աշխարհը, որպես բազմազան զգացմունքների և գաղափարների աղբյուր և կարող է դրանք արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Թվարկում է իրեն հետաքրքրող մի քանի երևույթ և ձգտում է աշխատանքում հաղորդել սեփական վերաբերմունքը:
- Վերցնում է գաղափարներ այլ առարկաներից անցած նյութից և արտացոլում է դրանք աշխատանքում:
- Աշխատանքում հաղորդում է բնական երևույթների դիտարկման արդյունքները:
- Արտացոլում է աշխարհում տեղի ունեցած մոտակա նշանակալից երևույթը և ձգտում է հաղորդել սեփական վերաբերմունքը դրա նկատմամբ:

Կերպ.կիր.VI.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանք:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խնդրի առանձնահատկությունից ելնելով՝ որոշում է աշխատանքի հաջորդականությունը:
- Մասնակցում է միասնական ստեղծագործական և կազմակերպչական որոշումների կայացմանը:
- Բաշխում է գործառույթները՝ ելնելով կատարվելիք աշխատանքի նպատակից:
- Որոշում է աշխատանքի կատարման ենթադրյալ ժամանակը:
- Քննարկում է պլանի մի քանի տարբերակ և ընտրում է դրանցից մեկը:
- Ստեղծում է հագուստի, կահույքի, տարբեր իրերի էսքիզներ:
- Ստեղծում է ինտերիերի (դասասենյակի, դպրոցի մարզադահլիճի, իր սենյակի) էսքիզներ:
- Տնկում և խնամում է ծառեր և ծաղիկներ:

- Ձևավորում է տարբեր դասարանային և դպրոցական միջոցառումներ:
- Ցածր դասարանցիներին օգնում է հանդեսի ձևավորման, գույքի նորոգման, դասարանի կարգավորման մեջ:
- Հանդեսների և թատերական ներկայացումների համար նկարում է պարզ դեկորացիաների և հագուստի դետալների էսքիզներ և մասնակցում է դրանց պատրաստմանը:
- Տարբեր նյութերի կիրառմամբ ստեղծում է մանրակերտեր թատերական բեմադրությունների համար:
- Կոնստրուկտորի սխեմաների և դետալների կիրառմամբ հավաքում է պարզ էլեկտրական խաղալիք:

Կերպ.կիր. VI.6. Աշակերտը կարող է թիմում աշխատել՝ ստեղծագործական և կազմակերպչական հիմնախնդիրներ լուծելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Բաշխում է թիմում գործառույթները/պարտականությունները:
- Նախատեսում և օգտագործում է թիմակցի/թիմակիցների հնարավորությունները:
- Պահանջում է օգնություն և համագործակցում է ուրիշների հետ՝ կոնկրետ ստեղծագործական հիմնախնդիրը լուծելիս:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր. VI.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և այլ առարկաներից ստացած գիտելիքի հիման վրա դատել գեղարվեստական ստեղծագործության մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Դատում է սեփական ընտրության և մտահղացման մասին, որը կարող է հիմնվել այլ առարկաներից անցած նյութի վրա:
- Խոսում է ստեղծագործության բովանդակության մասին:
- Դատում է սեփական և ուրիշների աշխատանքում կիրառված գեղարվեստական հնարների և տարրերի մասին (ժանր, տեխնիկա, նյութ, կոլորիտ, կոմպոզիցիոն բաշխման սկզբունք և այլն):
- Խոսում է աշխատանքում հաղորդած տրամադրության մասին:
- Դատում է սեփական աշխատանքի թույլ և ուժեղ կողմերի մասին:

Կերպ.կիր. VI.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը ինքնարտահայտման և հաղորդակցության միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ընկերների հետ խոսում է նկարներով:

- Արտահայտում է կարծիք հեղինակի մտահղացման մասին:
- Խոսում է աշխատանքի բովանդակության մասին:
- Խոսում է տեղեկության մասին, որը ստացել է բեմադրությունից, ֆիլմից, գեղանկարչական/գրաֆիկական աշխատանքներից, գրքի պատկերազարդումներից:

Կերպ.կիր. VI.9. Աշակերտը կարող է պլանավորել և մասնակցել տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտ՝

- Որոշում է տարբեր միջոցառումների թեման և նպատակը:
- Կազմակերպում է ցուցահանդես:
- Մասնակցում է ներկայացման բեմադրությանը:
- Կազմակերպում և մասնակցում է տարբեր տեսակի ակցիաների (օր., ակցիա բնապահպանության թեմայով):
- Կազմակերպում է հանդիպումներ արվեստի ակնառու գործիչների հետ:

Ուղղություն. Արվեստի ընկալում համատեքստում

Կերպ.կիր. VI.10. Աշակերտը կարող է կերպարվեստի և կիրառական արվեստի տարբեր բնագավառի նմուշները կապել պատմական, կրոնական և սոցիալական համատեքստի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ճանաչում է տարբեր մշակույթների արվեստի հայտնի նմուշները:
- Անվանում է հայտնի ճարտարապետական կոթողների ստեղծման պատճառները (բուրգեր, չինական պատ, երկնաքերեր և այլն):
- Դատում է, թե ինչպես է արտացոլվում սոցիալական, պատմական և կրոնական համատեքստը արվեստի նմուշի տեսողական կողմի վրա:

Կերպ.կիր. VI.11. Աշակերտը կարող է արվեստի գործի բովանդակությունը կապել պատմության և մշակույթի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Տեսողական դետալներով (իրեր, հագուստ, շենքեր, տրանսպորտ) ճանաչում է, թե որ դարաշրջանը և մշակույթն է արտացոլված ստեղծագործության մեջ:
- Հետազոտում է որևէ պատմական երևույթի հետ կապված արվեստի նմուշները:
- Դատում է արվեստի նմուշներում արտացոլված պատմական կամ գրական կերպարների մասին և խոսում է դրանց բնույթի շուրջ:

Կերպ.կիր. VI.12. Աշակերտը ճանաչում է վրացական արվեստը և արվեստի գործիչներին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Հավաքում և համադասարանցիներին տեղեկություն է հայտնում իրեն հետաքրքիր պատմական ժամանակաշրջանի վրացական արվեստի կոթողների մասին (օր., Վրաստանի եկեղեցի-մենաստաններ, բերդ-ամրոցներ):
- Դատում է վրացական որմնանկարչության հայտնի նմուշների մասին:
- Թվարկում է վրացական արվեստի տարբեր բնագավառների (արձնապակի, ոսկերչություն, քանդակադրոշմ, ձեռագրերի մանրանկարներ և այլն) մի քանի նմուշ:
- Արտանկարում է վրացական զարդաքանդակ փորագրության նմուշներ:

Կերպ.կիր. VI.13. Աշակերտը գիտակցում է, թե ինչ դեր է կատարում արվեստը հասարակության կյանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է արվեստի հետ կապված մասնագիտությունների և դրանց նշանակության մասին:
- Դատում է արվեստի, որպես հափշտակության և մասնագիտության մասին:
- Անվանում է իր քաղաքում/շրջանում/երկրում գոյություն ունեցող մշակութային հաստատությունները (թանգարան, պատկերասրահ, կինոթատրոն) և դատում է դրանց նշանակության մասին:

Ծրագրի բովանդակություն

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Գիծ, գույն (հակադիր, մերձավոր, աստիճանական), լույս-ստվեր, ֆակտուրա, ձև, ծավալ, համաչափություններ, կետ), հեռանկար (առաջին, միջին և ետին պլան, դիտակետ), համաչափություն, ռիթմ, հավասարակշռություն, ամբողջություն, հակադրություն (տրամադրության հաղորդում գծի և գույնի, տարբեր տեսակի նրբագծերի միջոցով):

Երաշխավորված տեսողական նյութ.

Գիծ՝ պարսկական մանրանկար, Ալֆոնս Մուխա, Օբրի Բերդալեյ, Լադո Գուդիաշվիլի, Պետրե Օգիսելի և այլք:

Գույն՝ գերմանացի էքսպրեսիոնիստներ («Կամուրջը և կապույտ հեծյալը» - Էռնստ Լյուդվիգ Կիրխներ, Էմիլ Նոլդե, Վասիլի Կանդինսկի, Ֆրանց Մարկ և այլն), ֆովիստ նկարիչներ (Անդրե Դերեն, Մորիս Ուտրիլո, Ժորժ Ռուո և այլն), Մարկ Շագալ, Ամադեո

Մոդիլիանի, Խաիմ Սյուտին, Կազիմիր Մալիչ, Պիտ Մոնդրիանի, Ջեկսոն Պոլոկ, Մարկ Ռոտկո և ուրիշներ:

Կոմպոզիցիոն բաշխման հիմնական հնարներ՝ հունական ծաղկամանների նկարագարում, Պիետրո Պերուջինո («Բանալու փոխանցում»), Վասիկյանի ստանցեր, Նիկոլա Պուսեն («Արկադյան հովիվներ»), Էդգար Դեգայի բալետային շարք և այլն: (Անհամաչափություն), Գուստավ Կլիմտ (ստատիկա), Մանդրո Բոտիչելի «Գարուն», Անրի Մատիսի «Պար» (դինամիկա), Յան Ստեն (օր., «Բժշկի այց», «Ձեռքա», «Ձվերի պար», «Ընտանեկան աղոթք», «Աղջիկների և պատանիների դպրոց», «Սուրբ Նիկոլոզի օր»), «Հիվանդը և բժիշկը»: Պիտեր դե Հոոխ, Յան Վերմեեր, Ժան Ֆրանսուա Միլլե, Գիգո Գաբաշվիլի, Ալեքսանդրե Սրնիշվիլի, Մոսե Թոթաե, Օսկար Շմերլինգ (Կենցաղային ժանր), Անդրեա Մանտենիա (դիտակետ), Սալվադոր Դալիի «Խաչելություն», Ռենե Մագրիտ (Հորիզոնի գիծ):

Նյութ և գործիք.

Տուշ, մատիտ, կավճաներկ, գուաշ, ջրաներկ, տեմպեր, ածուխ, կավիճ, գունավոր թուղթ, ստվարաթուղթ, պլաստիլին, կավ, գործվածք, թել, պարան, մետաղալար, մետաղյա, պլաստմասսայե տուփեր, բնական և արհեստական նյութ, փորձարարություն տարբեր նյութով, ատաղձագործական, բրուտագործական, գործելու, կարելու գործիք:

Տեխնիկա, ընթացակարգ և գործընթացներ.

Գեղանկարչության, գրաֆիկա, գրաֆիտ, դրոշմահետք, ծեփում, ապլիկացիա, թղթի պլաստիկա, խճանկար, կոլաժ, կոնստրուկցիա, կարպետ, թաղիք, գորելեն, ասեղնագործություն, համակարգչային տեխնոլոգիաներ:

Կտրել, սոսնձել, քերծել, ծոմծել, ոլորել, հյուսել, ասեղնագործել, գործել, կարել, փայտի վրա փորագրել:

Գեղանկարչության, գրաֆիկայի տեխնիկաներ (նրբագիծ, բիծ, դրոշմահետք, ծեփում, ապլիկացիա, թղթե պատրաստվածք, խճանկար, կոլաժ, մոդելավորում, կոնստրուկցիա, համակարգչային գրաֆիկա, կտրել, սոսնձել, քերծել, ծոմռել, ոլորել, հյուսել:

Գաղափարների արտահայտում.

Գաղափարների աղբյուրներ. հայտնի նկարիչների աշխատանքներ, տպավորություններ շրջապատի դիտարկումից, գուգորություններ, երևակայություն, գեղարվեստական գրականություն, երաժշտություն, ֆիլմ, համերգ, ներկայացում, լրատվամիջոցներ:

Ենթադրյալ թեմաներ.

«Տարվա չորս եղանակ», «Հեքիաթային այգի», «Միրելի կինոնկարի հերոս», «Վրացական զարդանախշի մոտիվներ», «Լեզգեհների աշխարհ», «Հայրենիք», «Հերոսություն», Էմբլեմա, լոգո, զինանշան, դրոշ, էքսլիբրիս:

Աշխատանքային գործունեություն.

Դեկորատիվ և կիրառական առարկաներ, գրքեր (կազմում) թատերական ռեկվիզիտ (հագուստի և դեկորացիայի դետալներ), ինտերիերի էսքիզներ, գույքի նորոգում, շնորհավորագիր և հրավիրատոմս, հանդեսների և թատերական ներկայացումների ազդ, աշխատանք՝ ինքնուրույն, գույզի հետ, խմբային:

Հաղորդակցություն.

Աշխատանքի ներկայացում լսարանի առջև (դատողություն մտահղացման, հույզի, նպատակների, խնդիրների մասին, տպավորությունների, դիտարկումների, փորձի փոխանակում, գնահատում և դրա հիմնավորում, համապատասխան տերմինների կիրառում:

Զրույց աշխատանքից ստացած մշակութային տեղեկության մասին:

Դասարանային և դպրոցական ցուցահանդես, բեմադրություն, ակցիա, հանդիպումներ արվեստի գործիչների հետ, էքսկուրսիաներ թանգարաններ, պատկերասրահներ, արհեստանոցներ, քաղաքից դուրս:

Արվեստի ընկալում համատեքստում.

Կերպարվեստի հայտնի նմուշների դիտում, ճանաչում և կապում երկրի մշակույթի հետ, պայմանական և իրատեսական աշխատանքների համեմատում, պատմական և մշակութային տեսակետի ազդեցությունը արվեստի նմուշի բովանդակության վրա:

Տեղեկության հայթայթում արվեստի վրաց գործիչների և նրանց ստեղծագործությունների մասին, վրացական արվեստի բնագավառների ծանոթություն, որմնանկարչություն, ճարտարապետություն, արծնապակի, ոսկերչություն, քանդակադրոշմ, մանրանկարչություն և այլն:

Արվեստի դերի հետազոտում հասարակության կյանքում:

Կերպարվեստի հայտնի աշխատանքների դիտում, ծանոթություն, կապում պատմական, կրոնական և սոցիալական համատեքստի հետ, զրույց դեկորատիվ-կիրառական առարկաների նշանակության մասին, արվեստի դերի մասին հասարակական վայրերում, բովանդակության կապում պատմության, մշակույթի հետ, տեղեկության հավաքում իրենց քաղաքում, գյուղում, շրջանում բնակվող արվեստի գործիչների և նրանց ստեղծագործության մասին:

Երաշխավորված տեսողական նյութ.

Գեղանկարչություն և գրաֆիկա՝ Եգիպտոսի որմնանկարչություն, Փայումիի որմնանկարը, Պոմպեյի որմնանկարներ, Վերածնունդ՝ դազգահային և

որմանակարչության նմուշներ, Դելակրուա, Էնգր, Դավիթ, իմպրեսիոնիստներ, էտիմպրեսիոնիստներ: Վրացական միջնադարյան որմանակարչության նմուշներ (Բեթանիա, Վարձիա, Գելաթի, Դավիթ Գարեջիի նկարչություն, սվանական դպրոց և այլն) վրացական դազգահային նկարչության առաջին նմուշներ (օր., թբիլիսյան պորտետյան դպրոց):

Քանդակագործություն՝ Եգիպտոս, Միջագետք, գոթական, վերածնունդ, 19-20-րդ դ.դ. (օր., Ռոդեն, Մայոլ, Բարլախ, Բրանկուզ, Ջակոմետի և այլք):

Ճարտարապետություն՝ Սուրբ Սոֆիայի տաճար, Սուրբ Պետրոսի տաճար, Երուսաղեմի տաճար, Վերսալի պալատ, Էրմիտաժ, Գաուդիի ճարտարապետություն, վրացական կոթողներ՝ Սվետիցխովելի, Ալավերդի, Բագրատի տաճար, Օշկի, Սամթավիսի, Գելաթի մենաստան, Բեթանիա, Վարձիա և այլն:

Կիրառական արվեստ՝ շումերական, եգիպտական, անտիկ դարաշրջանի կենցաղային իրեր և զարդեր, վաղ քրիստոնեական դարաշրջանի կիրառական արվեստի նմուշներ, զինանիշագիտության օրինակներ, չինական մետաքս, կոլիսյան ոսկերչություն և այլն:

Գլուխ XLVII

Առարկայական ծրագիր բազային աստիճանում

VII դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներ՝ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
Կերպ.կիր. VII.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է ստեղծագործաբար կիրառել կերպարվեստի տարրերի և սկզբունքների	Կերպ.կիր. VII.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և, ստացած գիտելիքի վրա	Կերպ.կիր. VII.11. Աշակերտը կարող է ճանաչել և համեմատել տարբեր դարաշրջանների և

<p>իմացությունը՝ կոնկրետ հիմնախնդիրը լուծելու համար:</p> <p>Կերպ.կիր. VII.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված ընտրել և ստեղծագործաբար կիրառել տարբեր նյութեր, տեխնիկա և ընթացակարգ:</p> <p>Կերպ.կիր. VII.3. Աշակերտն ընդարձակում է շրջակա միջավայրում օբյեկտների միջև առկա կապերն աշխատության մեջ արտացոլելու ուղիները և կարող է հաղորդել մանրամասներ:</p> <p>Կերպ.կիր. VII.4 . Աշակերտն ընկալում է աշխարհը, որպես բազմազան զգացմունքների և գաղափարների աղբյուր, և կարող է դրանք արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր. VII.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանքներ:</p>	<p>հիմնվելով, արտահայտել և հիմնավորել սեփական կարծիքը արվեստի ստեղծագործության մասին:</p> <p>Կերպ.կիր. VII.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը ինքնարտահայտման և հաղորդակցության միջոց է:</p> <p>Կերպ.կիր. VII.9. Աշակերտը քննադատության ժամանակ հարգանքով է վերաբերվում ուրիշի աշխատանքին և կարծիքին:</p> <p>Կերպ.կիր. VII.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:</p>	<p>մշակույթների արվեստի նմուշներ:</p> <p>Կերպ.կիր. VII.12. Աշակերտը կարող է արվեստի ստեղծագործության բովանդակությունը կապել պատմության և մշակույթի հետ:</p> <p>Կերպ.կիր. VII.13. Աշակերտը ճանաչում է վրացական արվեստը և արվեստի գործիչներին:</p> <p>Կերպ.կիր. VII.14. Աշակերտը հետազոտում է, թե ինչ դեր է կատարում արվեստը հասարակության կյանքում:</p>
--	---	--

<p>Կերպ.կիր. VII.6. Աշակերտը կարող է աշխատել թիմում՝ ստեղծագործական և կազմակերպական հիմնախնդիրներ լուծելու համար:</p>		
---	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ.կիր.VII.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է ստեղծագործաբար կիրառել կերպարվեստի տարրերի և սկզբունքների իմացությունը՝ կոնկրետ հիմնախնդիրը լուծելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կիրառում է տարբեր հնարներ (լույս-ստվեր, հակադրություն, կոմպոզիցիոն բաժանում, նրբագիծ, ֆակտուրա, կոլորիտ)՝ զուգորդություններ և հույզեր հաղորդելու համար:
- Բնանկար, փողոց (լանդշաֆտ) պատկերելիս կիրառում է հորիզոնի գիծը:
- Աշխատանք ստեղծելիս՝ կիրառում է կոմպոզիցիոն բաշխման հիմնական հնարները, օր., դիտակետ, հավասարակշռություն, սիմետրիա, անհամաչափություն, ստատիկա, դինամիկա:
- Պատկերում է բազմապատկեր կոմպոզիցիաներ:
- Տարբեր տեսակի (շրջանային, ուղղահայաց, հորիզոնական, անկյունագծային) նրբագծերով ստեղծում է մեծ չափի աշխատանքներ:
- Պատկերում է մարդու մարմինը՝ հաշվի առնելով հիմնական համամասնությունները:
- Տարբեր գեղարվեստական հնարներով աշխատանքում հաղորդում է դինամիկա, ստատիկա (պատկերների շարժում, քամի):
- Մխալը վեր է ածում աշխատանքի տարրի:
- Նկարում է տարածություն՝ հեռանկարի հիմնական կանոնների օգտագործմամբ:

Կերպ.կիր.VII.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված ընտրել և ստեղծագործաբար կիրառել տարբեր նյութեր, տեխնիկա և ընթացակարգ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ընտրում է ավանդական ձեռագործի որևէ տեսակ և ստեղծում է նմուշներ (կարպետ, թաղիք, գոբելեն, ասեղնագործություն, գործել, կարել, փայտի վրա փորագել, կավագործություն և այլն):
- Ստեղծում է կոմպոզիցիաներ հայթայթած տարբեր նյութով:
- Կատարում է գրաֆիկական աշխատանքներ տարբեր յուրաձևություններով (գիծ, շտրիխ, նրբագիծ, տարբեր չափի և ձևի վրձիններ, գրիչ և բույսերի ցողուններ):
- Ընտրում է համապատասխան պատկերամիջոցներ, նյութ, տեխնիկա և թեմատիկա՝ տրամադրություն հաղորդելու համար:

Կերպ.կիր. VII.3. Աշակերտն ընդարձակում է շրջակա միջավայրում օբյեկտների միջև առկա կապերն աշխատության մեջ արտացոլելու ուղիները և կարող է հաղորդել մանրամասներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Նկարում է համապատասխան միջավայրում մարդկանց, թռչուններ, կենդանիներ և բույսեր բնօրինակից և հիշողությամբ՝ ավել դետալներ կիրառելով:
- Նկարում է կենցաղային տեսարաններ,
- Նկարում է սենյակի ինտերիերը բնօրինակից և հիշողությամբ (իր սենյակի, դասասենյակի և այլն):

Կերպ.կիր. VII.4. Աշակերտն ընկալում է աշխարհը, որպես բազմազան զգացմունքների և գաղափարների աղբյուր, և կարող է դրանք արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Գաղափարներ և տրամադրություններ պատկերելու համար՝ ընտրում է թեմաներ:
- Նկարում է զգացմունքով հարուցված զուգորդություններ և տպավորություններ:
- Կիրառում է այլ առարկաներից ստացած գիտելիքը աշխատանքի սյուժեի համար:
- Պարզորոշ պատկերում է դիմախաղը, ձեռածությունը և դետալներ (հագուստ, արքեսուարներ)՝ դիմանկարում բնավորությունը հաղորդելու համար:
- Կիրառում է տարբեր մշակույթի և ժամանակաշրջանի նկարիչների գործերը՝ որպես սեփական աշխատանքը ստեղծելու աղբյուր:
- Աշխատանքում խորհրդանիշերի միջոցով հաղորդում է որոշակի գաղափար (օրինակ, ստեղծում է դասարանի, դպրոցի, թիմի խորհրդապատկերը):

Կերպ.կիր. VII.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանքներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Քննարկում է աշխատանքային պլանի մի քանի տարբերակ և ընտրում է դրանցից մեկը:
- Պլանավորում է կատարելիք աշխատանքի հերթականությունը և աշխատանքի գրաֆիկը, բաժանում է գործառույթները, վերահսկում է աշխատանքի ընթացքը, հիմնախնդրի դեպքում փոխում է ռազմավարությունը:
- Ստեղծում է արտադրանքի դիզայնի էքիզներ (հագուստ, տրանսպորտ, մարզական գույք և այլն):
- Կատարում է դասասենյակի ինտերիերի էքիզը:
- Դեկորատիվ ձևավորում է դպրոցի բակը, անկյունը:
- Նկարում և պատրաստում է թատերական հագուստ և դեկորացիայի մանրամասներ (զլխարկ, դիմակ, վարագույր, ծաղկեպսակ):
- Ձևավորում է տարբեր դասարանային կամ դպրոցական միջոցառում, ստեղծում է շնորհավորագրեր և հրավիրատոմսեր, շրջանակներ, գավաթներ, պատի թերթ, ազդ հանդեսի համար:
- Վերականգնում է վնասված իրերը և դպրոցական գույքը (նստարան, քարտեզ):
- Կազմում և նորոգում է դպրոցական կամ դասարանական գրադարանի գրքերը:

Կերպ.կիր. VII.6. Աշակերտը կարող է աշխատել թիմում՝ ստեղծագործական և կազմակերպական հիմնախնդիրներ լուծելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Բաժանում է գործառույթները՝ ելնելով կատարվելիք խնդրի նպատակից:
- Որոշում է աշխատանքի կատարման ենթադրյալ ժամկետը և պահպանում է ժամանակաչափը ամեն տեսակ ակտիվություն կատարելիս:
- Մասնակցում է միասնական ստեղծագործական և կազմակերպչական որոշման ընդունմանը:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր. VII.7. Աշակերտը կարող է ներկայացնել անհատական և խմբային աշխատանքներ և, ստացած գիտելիքի վրա հիմնվելով, արտահայտել և հիմնավորել սեփական կարծիքը արվեստի ստեղծագործության մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ներկայացնում է աշխատանքը ընդարձակ լսարանի առջև (օր., դպրոցական ցուցահանդեսում):
- Խոսում է իր և ուրիշների աշխատանքերում նմանությունների և տարբերությունների մասին:
- Բարեկիրթ է ուրիշի աշխատանքի մասին խոսելիս:

- Խմբային աշխատանքներ ներկայացնելիս՝ խոսում է այն նպատակների և խնդիրների մասին, որոնք խումբը նախանշել էր (որքանով հասավ խումբը նախանշած նպատակին (ինչն էր հաջողակ և ինչ նկատի կունենար խումբը ապագայի համար):
- Խոսում է աշխատանքի ստեղծման մոտիվների մասին:
- Աշխատանքի մասին դատում է, ըստ դրանում կիրառված գեղարվեստական հնարների:
- Սեփական աշխատանքը ներկայացնելիս՝ խոսում է մտահղացման, հույզերի մասին, որոնք ցանկանում էր արտացոլել և որքանով հասավ նախանշած նպատակին (ինչն էր հաջողակ և ինչը հաշվի կառնի ապագայի համար):

Կերպ.կիր. VII.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը ինքնարտահայտման և հաղորդակցության միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խոսում է արվեստի աշխատանքով հարուցված առաջին տպավորության մասին և պարզաբանում է, թե ինչն առաջացրեց այդ զգացումը (սյուժեն, կոմպոզիցիան, գույնը, ֆիգուրների պատկերումը և այլն):
- Գնահատում է արվեստի աշխատանքները (սեփական գիտելիքի և տպավորությունների վրա հիմնվելով):
- Դատում է այն մասին, թե ինչ իմացավ այս կամ այն մշակույթի մասին՝ նրա արվեստի գործին ծանոթանալով:

Կերպ.կիր. VII.9. Աշակերտը քննադատության ժամանակ հարգանքով է վերաբերվում ուրիշի աշխատանքին և կարծիքին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Բարեկիրթ է ուրիշի սխալների մասին խոսելիս:
- Հանդուրժողական է տարբերվող գաղափարների, ոճի, տեսակետների նկատմամբ:
- Վեճի ժամանակ ուրիշին նույնպես տալիս է խոսելու հնարավորություն:

Կերպ.կիր. VII.10. Աշակերտը մասնակցում է տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Որոշում է տարբեր միջոցառումների թեման և նպատակը:
- Կազմակերպում է ցուցահանդես և մասնակցում է դրան:
- Մասնակցում է ներկայացման բեմադրությանը:
- Հանդիպում է արվեստի հայտնի գործիչների հետ:
- Կազմակերպում և մասնակցում է տարբեր տեսակի ակցիաների (օր., ծխելու դեմ ակցիային):

Ուղղություն. Արվեստի ընկալում համատեքստում

Կերպ.կիր. VII.11. Աշակերտը կարող է ճանաչել և համեմատել տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստի նմուշները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը`

- Ճանաչում է տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստի հայտնի նմուշները:
- Տարբերում է միմյանցից իրական և պայմանական պատկերները:
- Ճանաչում է այս կամ այն մշակույթի արվեստի նմուշների որոշ բնորոշ նշաններ:
- Անվանում է տարբեր մշակույթների միևնույն նշանակման ճարտարապետական, կերպարվեստի և կիրառական արվեստի նմուշները:

Կերպ.կիր. VII.12. Աշակերտը կարող է արվեստի ստեղծագործության բովանդակությունը կապել պատմության և մշակույթի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը`

- Դատում է այն մասին, թե ինչ ազդեցություն ունեցավ պատմական և մշակութային համատեքստը աշխատանքի բովանդակության վրա:
- Ճանաչում է արվեստի նմուշը, ըստ տեսողական տարրերի, որպես այս կամ այն մշակույթի պատկանելություն:
- Ճանաչում է պատմական երևույթը, որը վերածվել է ստեղծագործողի ներշնչման աղբյուրի:

Կերպ.կիր. VII.13. Աշակերտը ճանաչում է վրացական արվեստը և արվեստի գործիչներին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը`

- Դատում է նյութական մշակույթի կոթողների մասին, որոնք տեսել է, և արտահայտում է իր վերաբերմունքը:
- Համեմատում է եկեղեցական ճարտարապետության հայտնի հուշարձանները:
- Քննարկում է մի քանի հայտնի վրաց ստեղծագործողի (նկարչի, քանդակագործի, ճարտարապետի) աշխատանքները:

Կերպ.կիր. VII.14. Աշակերտը հետազոտում է, թե ինչ դեր է կատարում արվեստը հասարակության կյանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը`

- Խոսում է արվեստի այն բնագավառների մասին, որոնք նրա կյանքի անբաժանելի մասն են:

- Խոսում է քաղաքի և երկրի կյանքում թանգարանների և պատկերասրահների դերի մասին:
- Դատում է հասարակական վայրերում արվեստի որոշ նմուշների (քանդակ, պլակատ, ազդ, գովազդ) նշանակության մասին:

Ծրագրի բովանդակություն

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Գիծ (բարակ, հաստ, բեկյալ, կտրտված, ալիքային), ուրվագիծ, գույն (հիմնական, բաղադրված, սառը, տաք, ինտենսիվ, կիսատոն, հակադրություն) ձև (երկչափ (հարթության վրա), համաչափ, անհամաչափ), լույս-ստվեր, ֆակտուրա, ծավալ, ամբողջականություն, համաչափություններ, տարածություն (հորիզոնի գիծ, հեռանկար, կուտակման կետ), դիտակետ, համաչափություն, ռիթմ, հավասարակշռություն, հակադրություն, դինամիկա, տրամադրության հաղորդում գծի, գույնի, տարբեր տեսակի նրբագծերի միջոցով:

Երաշխավորված տեսողական նյութ.

Կլոդ Մոնե («Խոտի դեզ, առավոտվա ձյան տպավորությունը»), Ժորժ դե Լա Տուր և այլք (հակադրություն, լույս-ստվեր), Պոլ Գոգեն, Էնդի Ուորհոլ, Մորիս Էշեր («Երկինք և ջուր» սև-սպիտակ հակադրություն) և այլք, Ռեմբրանդտ Հարմենս Վան Ռեյն (օր., «Գիշերվա պահակը»), Տիցիան Վեչելիո (օր., «Տիրամայրը բալերով»), Պիտեր Բրեյգել Ավագ (օր., «Որսորդները ձյան վրա»), Դիեգո Վելասկես, Էդուարդ Մանե (օր., «Բար «Տոլիբերժերում»), Վասիլ Կանդինսկի, Պիտ Մոնդրիան և այլն: (Կոմպոզիցիոն բաշխում), Վինսենտ Վան Գոգ, Ջեկսոն Պոլոկ, Ջիբսոն Խունդաձե, Էդմոնդ Կալանդաձե, (նրբագիծ և ֆակտուրա), Պաոլո Վերոնեզե (օր., «Մարդուների հաղթանակը»), Պիտեր Պաուլ Ռուբենս (օր., «Վերադարձ դաշտից»), Կլոդ Լորենի և Ջոն Կոնստեբլի բնանկարները, Էնդրիու Վայետ (օր., «Կրիստինայի աշխարհը») և այլն: (Հորիզոնի գիծ, դիտակետ, կոմպոզիցիոն բաժանում) որևէ վրացական տաճարի կամարային նկարչություն (օր., Սաֆարա, Գելաթի), Անդրեյ Ռուբլյովի «Սուրբ Երրորդություն» (համաչափություն), Պերուջինո, Լեոնարդո դա Վինչի (Կուտակման կետ), Դելֆոսի Կառապանը, Միրոնի Բադրոյի Նետահարը (ստատիկա), Սկոպասի Մենադա, ֆուտուրիստներ՝ Ջակոմո Բալա, Ումբերտո Բոչոնի, Ջինո Սեվերինի, Կարլո Կարա, Մարսել Դյուշան (օր., «Աստիճանից իջնող նյութ»), Նատալյա Գոնչարովա (օր., «Հեծանվորդը») և այլն: (Ռիթմ, դինամիկա), Նիկոլա Պուսեն (օր., «Գերմանիկի մահը»), Ժակ-Լուի Դավիդ (օր., «Հորացիոսների երդումը»), Կարլ Բրյուլով (օր., «Պոմպեյի վախճանը») և այլն (Պատմական ժանր):

Նյութ և գործիք.

Տուշ, մատիտ, կավճաներկ, գուաշ, ջրաներկ, տեմպեր, ածուխ, թուղթ, ստվարաթուղթ, կավ, գործվածք, թել, պարան, մետաղալար, մետաղ, բնական և

արհեստական նյութ, փորձարարություն տարբեր նյութով, գործելու, կարելու, կավագործական, ատաղձագործական գործիք:

Տեխնիկա, ընթացակարգ, գործընթացներ, տեխնոլոգիաներ.

Գեղանկարչության, գրաֆիկայի տարբեր տեխնիկա, դրոշմահետք, ծեփում, ապլիկացիա, թղթի պլաստիկա, կոլաժ, մոդելավորում, կոնստրուկցիա, համակարգչային տեխնոլոգիաներ:

Քերծել, ծոմոել, ոլորել, հյուսել, ասեղնագործել, գործել, կարել, փայտի վրա փորագրել:

Գաղափարների արտահայտում.

Առարկաների և դրանց գործառույթների միջև կապերի, զուգորդությունների հաղորդում, դետալների ճանաչում և արտացոլում, գաղափարների աղբյուրներ, հայտնի նկարիչների աշխատանքներ, բնական երևույթներ, կյանքում տեսած դրվագներ, երևակայություն, գեղարվեստական գրականություն, ֆիլմ, համերգ, ներկայացում, լրատվամիջոցներ:

Ենթադրյալ թեմաներ.

«Միրելի գրական/պատմական հերոս», «Դիցաբանական մոտիվներ», «Լեզենդների աշխարհ», «Նկարիչը և մուսան», «Շինարարություն», ազատ թեմաներ և այլն:

Աշխատանքային գործունեություն.

Դեկորատիվ և կիրառական առարկաների, թատերական ռեկվիզիտի (հագուստի և դեկորացիայի դետալներ), ինտերիերի էսքիզների, շնորհավորագրերի և հրավիրատուների, հանդեսների և թատերական ներկայացումների ազդի ստեղծում, գրքերի կազմում, գույքի նորոգում, աշխատանք՝ ինքնուրույն, գույզի հետ, խմբային:

Հաղորդակցություն.

Աշխատանքի ներկայացում լայն լսարանի առջև, (դաստոգություն մտահղացման, հույզի, նպատակների, խնդիրների մասին), տպավորությունների, դիտարկումների, փորձի փոխանակում, գնահատում և դրա հիմնավորում, համապատասխան տերմինների կիրառում:

Զրույց կոնկրետ մշակույթի բնորոշ գծերի, աշխատանքից ստացած տեղեկության մասին:

Դասարանային և դպրոցական ցուցահանդես, բեմադրություն, ակցիա, հանդիպումներ արվեստի գործիչների հետ, էքսկուրսիաներ թանգարաններ, պատկերասրահներ, արվեստագետի արհեստանոց, քաղաքից դուրս:

Արվեստի ընկալում համատեքստում.

Կերպարվեստի հայտնի աշխատանքների (այդ թվում վերարտադրանկարների) դիտում, ճանաչում և դրանց կապելը դարաշրջանի և մշակույթի հետ, պատմական-կրոնական-մշակութային համատեքստի ազդեցություն գեղարվեստական որոշման վրա, տեղեկության հավաքում արվեստի տեղական գործիչների մասին և դրանց ստեղծագործության վերլուծություն, մշակույթի հետ կապված հաստատություններ (թանգարան, պատկերասրահ, համերգային դահլիճ, կինոթատրոն),

Կիրառական արվեստ..

Ասիական (օր. պարսկական, արաբական, հնդկական, չինական, ճապոնական) և եվրոպական կիրառական արվեստի նմուշներ (հագուստ, ոսկերչական արտադրանք, կենցաղային նշանակման առարկաներ, ինտերիերի ավանդական դիզայն և այլն):

VIII դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներ՝ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
<p>Կերպ.կիր. VIII.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս կարող է ստեղծագործաբար կիրառել կերպարվեստի տարրերի և սկզբունքների իմացությունը՝ կոնկրետ հիմնախնդիրը լուծելու համար:</p> <p>Կերպ.կիր. VIII.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, դրսևորում է նախաձեռնություն և զարգացնում է տարբեր նյութ, տեխնիկա և ընթացակարգ կիրառելու կարողություն:</p> <p>Կերպ.կիր. VIII.3. Աշակերտը կարող է աշխատանքում արտացոլել շրջակա միջավայրի դիտարկման արդյունքները, զարգացնել պատկերավորման հնարները:</p> <p>Կերպ.կիր. VIII.4 . Աշակերտն ընկալում է աշխարհը, որպես</p>	<p>Կերպ.կիր. VIII.7. Աշակերտն արվեստի կոնկրետ նմուշի վերլուծության ժամանակ կարող է կիրառել կերպարվեստի տարրերի և սկզբունքների իմացություն:</p> <p>Կերպ.կիր. VIII.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը հաղորդակցության և մշակույթի ինքնարտահայտման միջոց է:</p> <p>Կերպ.կիր. VIII.9. Աշակերտը կարող է պլանավորել և մասնակցել տարբեր տեսակի միջոցառումների:</p>	<p>Կերպ.կիր. VIII.10. Աշակերտը կարող է ճանաչել և համեմատել միմյանց տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստի նմուշները:</p> <p>Կերպ.կիր. VIII.11. Աշակերտը կարող է տարբեր համատեքստում քննարկել արվեստի նմուշը:</p> <p>Կերպ.կիր. VIII.12. Աշակերտը ճանաչում է վրացական արվեստը և արվեստի գործիչներին:</p> <p>Կերպ.կիր. VIII.13. Աշակերտը հետազոտում է, թե ինչ դեր է կատարում արվեստը հասարակության կյանքում:</p>

<p>բազմազան զգացմունքների և զադափարների աղբյուր, և ընդարձակում է դրանց արտացոլման ուղիներն աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր. VIII.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանքներ:</p> <p>Կերպ.կիր. VIII.6. Աշակերտը կարող է դիմել անհատական և խմբային աշխատանքի տարբեր ռազմավարության:</p>		
--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ.կիր. VIII.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է ստեղծագործաբար կիրառել կերպարվեստի տարրերի և սկզբունքների իմացությունը՝ կոնկրետ հիմնախնդիրը լուծելու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կիրառում է գույնի աստիճանավորումը, տարբեր տոնայնություն՝ աշխատանքում ծավալ, տարածություն հաղորդելու համար:
- Ստեղծում է դեկորատիվ աշխատանք գրաֆիկական միջոցներով (օր., ուրվագծով, գծով, շտրիխով):
- Ստեղծում է ոճայնացված գեղարվեստական դեմքեր:
- Նպատակաուղղված կիրառում է հակադիր և մերձավոր գույներ:
- Կիրառում է էֆեկտներ՝ զուգորդություններ և զգացմունքներ հաղորդելու համար:

Կերպ.կիր.VIII.2. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, դրսևորում է նախաձեռնություն և զարգացնում է տարբեր նյութ, տեխնիկա և ընթացակարգ կիրառելու կարողություն:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Խառը տեխնիկայով ստեղծում է գրաֆիկական և գեղանկարչական աշխատանքներ:
- Պատրաստում է դեկորատիվ-կիրառական առարկաներ՝ կավի, փայտի, մետաղի և այլ նյութերի առանձնահատկությունների հաշվառումով:
- Ընտրում է թեմատիկան, տեխնիկան, համապատասխան պատկերավորման հնարները և նյութը՝ տրամադրություն հաղորդելու համար:
- Համակարգչի կիրառմամբ ստեղծում է պատկերներ, էֆեկտներ, տարբեր առարկաների դիզայն, գրքի մանրակերտ:

Կերպ.կիր. VIII.3. Աշակերտը կարող է աշխատանքում արտացոլել շրջակա միջավայրի դիտարկման արդյունքները, զարգացնել պատկերավորման հնարները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Ջննում և աշխատանքում արտացոլում է, թե ինչպես է փոխվում առարկայի պատկերը ըստ դիտողից հեռավորության:
- Պատկերում է բնութագրական մանրամասներ՝ բնանկար, դիմանկար և նատյուրմորտ նկարելու ժամանակ:
- Կիրառում է տարբեր պատկերավորման հնարներ (լույս-ստվեր, գույն, կոմպոզիցիոն բաշխում, տարբեր տեսակի նրբագծեր)՝ աշխատանքում բնության երևույթները հաղորդելու համար:
- Նկարում է բնօրինակից և հիշողությամբ:

Կերպ.կիր. VIII.4 . Աշակերտն ընկալում է աշխարհը, որպես բազմազան զգացմունքների և գաղափարների աղբյուր, և ընդարձակում է դրանց արտացոլման ուղիներն աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Աշխատանքում հաղորդում է զգացմունքներով և հույզերով առաջացած գուգորությունները, տպավորությունները և գաղափարները:
- Աշխատանքների պլուստի համար կիրառում է այլ առարկաներից անցած նյութը:
- Դիմանկարում բնավորություն հաղորդելու համար՝ կիրառում է դիմախաղը, ձեռածությունը և դետալները (հագուստ, աքսեսուարներ):
- Կիրառում է տարբեր մշակույթի և ժամանակաշրջանի ստեղծագործողների աշխատանքները, որպես սեփական աշխատանքը ստեղծելու աղբյուր:

Կերպ.կիր.VIII.5. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանքներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կոնկրետ խնդիրը լուծելու համար՝ պլանավորում է կատարելիք աշխատանքի հաջորդականությունը:
- Որոշում է այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջադրված նպատակին հասնելու համար:
- Ստեղծում է երևակայական պետության զինանշան, դրոշ, ինչպես նաև դպրոցի, դասարանի լոգոն:
- Ստեղծում է շրջապատի դիզայնի էսքիզներ (ինտերիեր, էքստերիեր, դպրոցի բակ, զբոսայգի և այլն):
- Վերականգնում է դպրոցական գրադարանի գրքերը:
- Նկարում և պատրաստում է դպրոցական ներկայացման հագուստները և դեկորացիայի դետալները:
- Համակարգչային տեխնիկայի կիրառմամբ ստեղծում է հանդեսների և թատերական ներկայացումների ազդեր, հրավիրատոմսեր և շնորհավորագրեր:
- Տնկում և խնամում է բույսեր դպրոցի մերձակա տարածքում:
- Ստեղծում է լանդշաֆտի (զբոսայգի, պուրակ և այլն) դիզայնի պարզ էսքիզ:

Կերպ.կիր. VIII.6. Աշակերտը կարող է դիմել անհատական և խմբային աշխատանքի տարբեր ռազմավարությունների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Որոշում և ճշտում է տեղեկությունը՝ ապագա նախագիծը պլանավորելու համար:
- Բաժանում է թիմում աշխատանքը/գործառույթները/պարտականությունները:
- Նախատեսում և կիրառում է թիմակցի/թիմակիցների հնարավորությունները (կարողությունները):
- Օգնում է դասարանցիներին ստեղծագործական և կազմակերպական դժվարությունները հաղթահարելու մեջ:
- Օգնում է ուրիշներին՝ կոնկրետ խնդիրը կատարելու հարցում և, անհրաժեշտության դեպքում, նրանցից պահանջում է օգնություն:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր. VIII.7. Աշակերտն արվեստի կոնկրետ նմուշի վերլուծության ժամանակ կարող է կիրառել կերպարվեստի տարրերի և սկզբունքների իմացություն:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Դատում է նկարում պատկերված օբյեկտների կոմպոզիցիոն բաշխման մասին:

- Գնահատում է աշխատանքը՝ ըստ դրանում կիրառված գեղարվեստական հնարների:
- Դատում է արվեստի նմուշի ժանրի, թեմայի, նյութի, տեխնիկայի մասին:
- Դատում է արվեստի նմուշի կոլորիտի մասին:
- Ճանաչում է արվեստի նմուշի դարակազմիչ նշանները:
- Համեմատում է միմյանց տարբեր արվեստի նմուշներ, խոսում է՝ որն է ավելի հավանում և հիմնավորում է, թե ինչու է դրան գերապատվություն տալիս:

Կերպ.կիր. VIII.8. Աշակերտը հասկանում է և կարող է ներկայացնել, որ արվեստը հաղորդակցության և մշակույթի ինքնարտահայտման միջոց է:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Համեմատում է միմյանց տարբեր մշակույթների արվեստի նմուշներ՝ ըստ թեմատիկայի, ոճի, կոմպոզիցիոն կարգի, կոլորիտի:
- Անվանում է կոնկրետ մշակույթի մի քանի բնութագրիչներ, որոնք արտացոլված են աշխատության մեջ (հագուստ, ճարտարապետություն, ամանեղեն, կահույք և այլն):
- Գտնում է նյութ իրեն հետաքրքիր որևէ երկրի մշակույթի կոթողների մասին և ներկայացնում է համադասարանցիներին զեկուցման և դիտողական նյութի տեսքով:
- Դատում է, թե ինչ իմացավ այս կամ այն ազգի մասին՝ ծանոթանալով նրա արվեստի նմուշներին:

Կերպ.կիր. VIII.9. Աշակերտը կարող է պլանավորել և մասնակցել տարբեր տեսակի միջոցառումների:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Որոշում է տարբեր միջոցառումների թեման և նպատակը:
- Կազմակերպում է ցուցահանդես (անձամբ ընտրում է աշխատանքները, դասավորում է էքսպոզիցիան):
- Մասնակցում է ներկայացման պլանավորմանը:
- Կազմակերպում և մասնակցում է տարբեր տեսակի ակցիաների (օր., բնապահպանության):
- Կազմակերպում է հանդիպումներ արվեստի ակնառու գործիչների հետ:

Ուղղություն. Արվեստի ընկալում համատեքստում

Կերպ.կիր. VIII.10. Աշակերտը կարող է ճանաչել և համեմատել միմյանց տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստի նմուշները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Համեմատում է միմյանց տարբեր դարաշրջանների և մշակույթների արվեստի նմուշները և դատում է դրանց ընդհանուր և տարբերակիչ նշանների մասին:
- Համեմատում է միմյանց իրական և պայմանական պատկերները:
- Դատում է, թե ինչպես էր փոխվում կերպարվեստը (թեմատիկան, ոճը, տեխնոլոգիան, ընթացակարգը) ժամանակին զուգընթաց:
- Համեմատում է միմյանց մեկ մշակույթի հայտնի կոթողները:

Կերպ.կիր. VIII.11. Աշակերտը կարող է տարբեր համատեքստերում քննարկել արվեստի նմուշը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Հատկացնում է արվեստի նմուշը կոնկրետ դարաշրջանին կամ մշակույթին և հիմնավորում է իր կարծիքը:
- Արվեստի նմուշը քննարկում է պատմական, կրոնական, տնտեսական կամ քաղաքական տեսանկյունից:
- Դատում է, թե ինչպես արտացոլվեց տարբեր համատեքստը (պատմական, կրոնական, տնտեսական կամ քաղաքական) արվեստի նմուշի գեղարվեստական կողմի վրա:

Կերպ.կիր. VIII.12. Աշակերտը ճանաչում է վրացական արվեստը և արվեստի գործիչներին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Հավաքում է տեղեկություն իրեն հետաքրքիր պատմական ժամանակաշրջանի վրացական արվեստի կոթողների մասին և ծանոթացնում է համադասարանցիներին զեկուցման և դիտողական նյութի տեսքով:
- Դատում է վրացական որմնանկարչության մի քանի հայտնի նմուշների մասին:
- Հավաքում է տեղեկություն իրեն հետաքրքիր արվեստի բնագավառի (արձնապակի, ոսկերչություն, քանդակադրոշմ, պատկերագրություն և այլն) մի քանի նմուշների մասին և ծանոթացնում է համադասարանցիներին զեկուցման և դիտողական նյութի տեսքով:
- Ճանաչում է մի քանի վրացի նկարիչների աշխատություններ և համեմատում է միմյանց ըստ կատարման յուրաձևության:

Կերպ.կիր. VIII.13. Աշակերտը հետազոտում է, թե ինչ դեր է կատարում արվեստը հասարակության կյանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Գտնում է տեղեկություն մի քանի հայտնի մշակութային կոթողների մասին և դատում է հասարակության կյանքի վրա դրանց ազդեցության մասին (օր., Էյֆելյան աշտարակ, Նյու-Յորքի առևտրի կենտրոն, Ազատության քանդակ և այլն):

- Գտնում է տեղեկություն տարբեր երկրի լանդշաֆտային դիզայնի հայտնի նմուշների մասին և տեղեկացնում է համադասարանցիներին:
- Գտնում է նյութ որևէ հայտնի ստեղծագործողի կյանքի կամ նրա կոնկրետ ստեղծագործությունների վերաբերյալ և դատում է, թե ինչ ազդեցություն ունեցավ հասարակության կյանքի վրա:

Ծրագրի բովանդակություն

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Տարբեր տեսակի գիծ, նրբագիծ, գույն, ձև, լույս-ստվեր, ֆակտուրա, ծավալ, ամբողջություն, համամասնություններ, տարածություն, հեռանկար, հակահեռանկար, համաչափություն, ռիթմ, հավասարակշռություն, հակադրություն, դինամիկա (տրամադրության, զուգորդությունների, հույզերի հաղորդում տարբեր էֆեկտների միջոցով):

Երաշխավորված տեսողական նյութ.

Միքելանջելո Մերիզի դե Կարավաջո (օր., «Ընթրիք էմաուսում» և այլն), Անտոնիո Ալեգրի Կորեջո (օր., «Ծնունդ»), Պիտեր Բրեյգել Ավագ (օր., «Գեղջկական հարսանիք» և այլն), Յան Վերմեեր «Միրային բացիկ», «Սպասավորը կաթի կծով», «Սպան և ժպտացող դուստրը», «Գեղանկարչական արվեստ», «Աշխարհագրագետը», «Աստղագետը», «Դուստրը նամակով» և այլն), Ռեմբրանդտ Հարմենս Վան Ռեյն (օր., «Գիշերվա պահակը», «Անառակ որդու վերադարձը» և այլն), Ֆրանսիսկո Գոյա (օր., «Արքա Կառլոս IV-ի ընտանիքը» և այլն), Ժորժ Սերա (օր., «Անիերում լողանալը», «Կիրակի կեսօրը Գրանդ-Շատ կղզու վրա» և այլն) (կոմպոզիցիոն բաշխում, լույս-ստվեր, կոլորիտ), Վան Էյկ («Կանցլեր Ռոլենի տիրամայրը» (կոմպոզիցիոն բաշխում), Օգյուստ Դոմինիկ Էնգր (սառը կոլորիտ), Պաբլո Պիկասոյի «Լացոդ կինը», Իերոնիմուս Բոսխ (օր., «Աճպարարը»), Պիտեր Բրեյգել Ավագ (օր., «Կույրերը» և այլն), Դիեգո Վելասկեի և Պաբլո Պիկասոյի «Մենիներ», Ամադեո Մոդիլիանի, Կիս Վան Դոնգենի և Մարի Լորանսենի դիմանկարները, (ոճավորված գեղարվեստական դեմքեր), Ուիլյամ Տերներ (կոլորիտ, տոնայնություն տարածություն հաղորդելու համար), Տիցիան Վեչելիո (օր., «Պապ Պողոս III Ալեսանդրոն և Օտավիո Ֆարնեզեն միասին»), Պիտեր Պաուլ Ռուբենս (օր., «Ելենա Ֆորուսանը զավակների հետ» և այլն) (կոլորիտ), Անրի Տուլուզ Լոտրեկի, Արիստիդ Բրուիանի և Ժաննա Ավրիլի ազդերը կարարեի համար (հակադրություն), Ալբրեխտ Դյուրեր (օր., ուրվանկար «Իմ Ազնեսա» և այլն), Ռաուլ Դյուֆ (օր., ուրվանկար «Նավեր») (գիծ), Պիտ Մոնդրիան «Քրիզանթեմ» (գրաֆիկա), Ալֆրեդ Միսլեյ (օր., «Բաղերի հովիվ») (շրջանային նրբագծեր), Վասիլ Կանդինսկի (դեկորատիվ, ռիթմիկ կոմպոզիցիա), Ջովանի Անտոնիո Կանալետտոյի բնանկարները, Ալֆրեդ Միսլեյ (օր., «Կամուրջ Արժանտեում», «Ճանապարհ Լուվեսիենում»), Ջորջո դե Կիրիկո «Մելամադություն և փողոցի գաղտնիքը» (հեռանկար), Մարկ Շագալ (օր., «Զութակահարը», «Ծննդյան օր» և այլն) (զուգորդությունների հաղորդում,

խորհրդանշաններ), Իյյա Ռեպին (օր., «Զապորոժիեցիները նամակ են գրում Թուրքիայի սուլթանին», «Չէին սպասում» և այլն), Օգյուստ Ռենուարի «Դաշտում» և այլն) (հուզումների հաղորդում):

Ճարտարապետություն և քանդակագործություն. հռոմեական, գոթական, վերածննդի (Ռեյսնի, Շարտրի, Քյոլնի Մայր տաճարներ. Սանտա-Մարիա դել Ֆիորեի տաճարը Ֆլորենցիայում, Սուրբ Պետրոսի տաճարը Հռոմում: Դոնատելոյի, Միքելանջելո Բուոնարոտիի և Ջան Լորենցո Բեոնինիի քանդակները, Գիբերտի դարբասը, Ռոդեն (օր., «Դժոխքի դարբաս», «Կալեի քաղաքացիները» և այլն), Կոնստանտին Բրանկուզի, Արիստիդ Մայոլ, Էռնստ Բարլախ, Ալբերտո Ջակոմետի, Պաբլո Պիկասո և այլն:

Լանդշաֆտի դիզայնի պատմությունից (չինական, ֆրանսիական, անգլիական զբոսայգիներ և այլն):

Նյութ և գործիք.

Տուշ, թանաք, մատիտ, կավճաներկ, գուաշ, ջրաներկ, տեմպեր, ածուխ, ստվարաթուղթ, կավ, փայտ, գործվածք, մետաղ, մետաղալար, բնական և արհեստական նյութ, փորձեր տարբեր նյութերով:

Տեխնիկա և ընթացակարգ.

Գեղանկարչության, գրաֆիկայի տարբեր տեխնիկա, դրոշմահետք, ծեփում, թղթի պլաստիկա, կոլաժ, կոնստրուկցիա, համակարգչային տեխնոլոգիաներ:

Գաղափարների արտահայտում.

Առարկաների և դրանց գործառույթների միջև կապերի, զուգորդությունների հաղորդում, բազում դետալների ճանաչում և արտացոլում, գաղափարների աղբյուրներ, տարբեր մշակույթների, ժամանակաշրջանների արվեստի նմուշներ, հայտնի նկարիչների աշխատանքներ (*Ալբրեխտ Դյուրերի, Էժեն Դելակրուա, Օնորե Դոմյե, Օգյուստ Ռոդեն, Տուլուզ Լոտրեկ, Պաբլո Պիկասո և այլն*):

Բնական երևույթներ, կյանքում տեսած դրվագներ, երևակայություն, պատմական փաստեր, գեղարվեստական գրականություն, ֆիլմ, ներկայացում (թատերական, բալետային, օպերային բեմադրություն, համերգ և այլն), լրատվամիջոցներ:

Ենթադրյալ թեմաներ.

Կրոնական տոներ, «Մեր», «Հերոսություն», «Միքելի դիցարանական/պատմական/գրական կերպարներ», ազատ թեմաներ, թեմաներ ըստ սեփական երևակայության և այլն:

Աշխատանքային գործունեություն.

Դեկորատիվ և կիրառական առարկաներ, գրքերի կազմում, մանրակերտի ստեղծում, թատերական ռեկվիզիտ (հագուստի և դեկորացիայի դետալներ), ինտերիերի էսքիզներ, գույքի նորոգում, դպրոցի բակի դեկորատիվ ձևավորում, բույսերի տնկում-խնամում:

Աշխատանքի ռազմավարություն.

Աշխատել ինքնուրույն, գույզի հետ, թիմով:

Հաղորդակցություն.

Աշխատանքի ներկայացում ընդարձակ լսարանի առջև, (դաստողություն մտահղացման, հույզի, նպատակների, խնդիրների մասին), տպավորությունների, դիտարկման, փորձի փոխանակում, գնահատում և դրա հիմնավորում, համապատասխան տերմինների կիրառում:

Զրույց աշխատանքը ստեղծելու մոտիվների, խմբի կողմից նախանշված նպատակների մասին, աշխատանքի գնահատում գեղարվեստական հնարների համաձայն, զրույց տարբեր մշակույթներին բնորոշ նշանների, աշխատանքից ստացած տեղեկության մասին:

Ցուցահանդես, բեմադրություն, ակցիա, հանդիպումներ արվեստի գործիչների հետ, էքսկուրսիաներ:

Արվեստի ընկալում համատեքստում.

Կերպարվեստի հայտնի աշխատանքների դիտում, ճանաչում և դրանց կապելը դարաշրջանի և մշակույթի հետ, պայմանական և իրական աշխատանքների համեմատում. Արվեստի նմուշի հետազոտում կրոնական, սոցիալական, տնտեսական և քաղաքական տեսակետից:

Տեղեկություն արվեստի վրաց գործիչների և նրանց ստեղծագործությունների մասին, վրացական արվեստի բնագավառներ, որմնանկարչություն, ճարտարապետություն, արձնապատում, ոսկերչություն, քանդակադրոշմություն:

Տեղեկություն վրացական և համաշխարհային հնէաբանական արտեֆակտների հայտնաբերման նշանակության մասին:

IX դասարան

Կերպարվեստ և կիրառական արվեստ

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներ՝ ուղղությունների համաձայն

Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում	Հաղորդակցություն և մեկնաբանություն	Արվեստի ընկալում համատեքստում
<p>Կերպ.կիր. IX.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված ընտրել և ստեղծագործաբար կիրառել կերպարվեստի տարրերը, սկզբունքները, տարբեր նյութ, տեխնիկա և ընթացակարգ:</p> <p>Կերպ.կիր. IX .2. Աշակերտը ընկալում է աշխարհը, որպես բազմազան</p>	<p>Կերպ.կիր. IX 4. Աշակերտը կարող է կիրառել կերպարվեստի տարրերի և սկզբունքների իմացություն արվեստի կոնկրետ նմուշի վերլուծության ժամանակ:</p>	<p>Կերպ.կիր. IX.5. Աշակերտը կարող է ճանաչել և համեմատել տարբեր դարաշրջանի և ոճի աշխատանքները:</p> <p>Կերպ.կիր. IX.6. Աշակերտը հետազոտում և մեկնաբանում է համատեքստի ազդեցությունը կոնկրետ աշխատանքի և արվեստագետի</p>

<p>զգացմունքների և գաղափարների աղբյուր, և կարող է ստեղծագործաբար արտացոլել աշխատանքում:</p> <p>Կերպ.կիր. IX.3. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանքներ:</p>		<p>ստեղծագործության վրա:</p> <p>Կերպ.կիր. IX.7. Աշակերտը հետազոտում է Վրաստանի տարբեր անկյունների արվեստի նմուշները և կարող է դատել դրանց մասին:</p> <p>Կերպ.կիր. IX.8. Աշակերտը հետազոտում է արվեստի դերը հասարակության կյանքում:</p>
--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները

Ուղղություն. Ստեղծագործականության և գործնական կարողությունների և հմտությունների զարգացում

Կերպ.կիր. IX.1. Աշակերտը, աշխատանք ստեղծելիս, կարող է նպատակաուղղված ընտրել և ստեղծագործաբար կիրառել կերպարվեստի տարրերը, սկզբունքները, տարբեր նյութ, տեխնիկա և ընթացակարգ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կոլորիտի միջոցով տրամադրություն է հաղորդում:
- Կիրառում է հակադիր գույներ՝ գույնի հնչեղությունն ուժեղացնելու և հույզեր հաղորդելու համար:
- Կիրառում է նրբագծեր, հակադրություններ, ակցենտներ, դետալներ, ֆակտուրա, խառը նյութ՝ աշխատանքում տրամադրություններ և գաղափարներ հաղորդելու համար:
- Գեղանկարչական աշխատանք ստեղծելիս՝ կիրառում է ավանդական և ոչ ավանդական գործիքներ և տեխնիկա:
- Անցկացնում է փորձեր, ընտրված ոլորտում (նկարչություն, դիզայն, լուսանկարչություն, և այլն) հայթայթած տեղեկության հիման վրա (տեխնոլոգիա, թեորեմներ, պատկերավորման հնարներ, նյութ):

Կերպ.կիր. IX.2. Աշակերտն ընկալում է աշխարհը որպես բազմազան զգացմունքների և գաղափարների աղբյուր, և կարող է ստեղծագործաբար արտացոլել աշխատանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Կիրառում է տարբեր մշակույթների և ժամանակաշրջանների ստեղծագործողների աշխատանքները՝ սեփական մտահղացումն իրականացնելու համար:
- Ընտրում է թեման, ըստ սեփական հույզերի և տպավորությունների, և արտացոլում է աշխատանքում:
- Ստեղծագործաբար է արտացոլում շրջակա միջավայրի դիտարկման արդյունքում հարուցված տպավորությունները, գաղափարները և զգացմունքները:

Կերպ.կիր. IX.3. Աշակերտը կարող է պլանավորել և կատարել տարբեր տեսակի աշխատանքներ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Պլանավորում է աշխատանքի կատարման լավագույն ժամանակը, կատարողների թվաքանակը և, խնդրի առանձնահատկությունից ելնելով, որոշում է աշխատանքի հերթականությունը /գործառույթները/ պարտականությունները:
- Պլանավորում է, թե ինչ նյութական ռեսուրսներ կպահանջի կատարելիք աշխատանքը և ինչպես կհայթայթի այդ ռեսուրսները:
- Ստեղծում է արտադրանքի (հագուստ, տրանսպորտ, գույք և այլն) և շրջապատի (ինտերիեր, էքստերիեր, բակ, զբոսայգի և այլն) դիզայնի էսքիզները կոնկրետ ոճում (օր., էթնո, դասական, ռետրո, մոդեռն, մինիմալիզմ, ազատ և այլն):
- Նորոգում է վնասված դպրոցական գույքը:
- Համակարգչային տեխնիկայի կիրառմամբ ստեղծում է շնորհավորագրերի և հրավիրատոմսերի էսքիզներ, ինչպես նաև հանդեսների և թատերական ներկայացումների ազդեր:
- Հանդեսների և թատերական ներկայացումների համար նկարում և կատարում է դեկորացիաների և հագուստի էսքիզներ:
- Կոնստրուկտորի սխեմաների և դետալների կիրառմամբ հավաքում է պարզ էլեկտրական խաղալիք:

Ուղղություն. Հաղորդակցություն և մեկնաբանություն

Կերպ.կիր. IX.4. Աշակերտը կարող է կիրառել կերպարվեստի տարրերի և սկզբունքների իմացությունն արվեստի կոնկրետ նմուշի վերլուծության ժամանակ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Նախապես ընտրված չափանիշերի համաձայն գնահատում է աշխատանքը:
- Դատում է այն մասին, թե ինչ էֆեկտի կհասնի նկարիչը գույնի միջոցով (օր., առաջացնում է որոշակի հուզականություն, ստեղծում է տրամադրություն, առանձնացնում է գլխավորը, ուժեղացնում է հնչեղությունը):
- Դատում է, թե ինչ էֆեկտի է հասնում նկարիչը լույս-ստվերի կիրառումով:
- Արտահայտում է կարծիք արվեստի նմուշի գեղարվեստական արժեքի մասին և փորձում է հիմնավորել սեփական կարծիքը:

Ուղղություն. Արվեստի ընկալում համատեքստում

Կերպ.կիր. IX.5. Աշակերտը կարող է ճանաչել և համեմատել միմյանց տարբեր դարաշրջանների և ոճերի աշխատանքները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Համեմատում է միմյանց տարբեր պատմական ժամանակաշրջանների արվեստը մի քանի բնութագրիչի համաձայն (ոճ, թեմա, ժանր):
- Բնութագրում է XX դարի արվեստի մի քանի հոսանքների հայտնի նմուշներ:
- Ճանաչում է վրացական ճարտարապետական հայտնի նմուշները և համեմատում է նույն ժամանակաշրջանի այլ երկրների ճարտարապետական կոթողների հետ:
- Կոնկրետ նմուշների օրինակով դատում է նմանություն-տարբերությունների մասին, որ գոյություն ունի տարբեր ժամանակաշրջանների արվեստում (հին, նոր և ժամանակակից):
- Ճանաչում է կոնկրետ նկարչի աշխատանքը և դատում է նրա ստեղծագործական ոճի և յուրաձևության մասին:

Կերպ.կիր. IX.6. Աշակերտը հետազոտում և մեկնաբանում է համատեքստի ազդեցությունը կոնկրետ աշխատանքի և արվեստագետի ստեղծագործության վրա:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Տարբեր տեսողական տարրերի համաձայն, ճանաչում է դարաշրջանը, որը պատկերված է աշխատանքում (հագուստ, իրեր, տրանսպորտ և այլն):
- Հավաքում է տեղեկություն այն պատմական ժամանակաշրջանի և երևույթների մասին, որոնք ազդեցություն են գործել կոնկրետ արվեստագետի ստեղծագործության վրա և ծանոթացնում է համադասարանցիներին գեկուցման և դիտողական նյութի տեսքով:
- Դատում է, թե ինչ ազդեցություն է գործել այս կամ այն պատմական երևույթը որևէ կոնկրետ աշխատանքի վրա:
- Դատում է, թե ինչպես արտացոլվեցին դարաշրջանի գաղափարական և ոճային նշանները արվեստագետի ստեղծագործության վրա:

Կերպ.կիր. IX.7. Աշակերտը հետազոտում է Վրաստանի տարբեր անկյունների արվեստի նմուշները և կարող է դասել դրանց մասին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Անվանում է արվեստի բնագավառները, որոնք հատկանշական են վրացական ժողովրդական ստեղծագործությանը (փայտի փորագրություն, քանդակադրոշմություն, ասեղնագործություն, գործել, թաղիք):
- Դատում է, թե ինչ հնարներով են պահպանվել և պաշտպանվել վրացական արվեստում ժողովրդական ստեղծագործության ավանդույթները:
- Համեմատում է վրացական ժողովրդական ստեղծագործության որևէ բնագավառի նմուշն այլ երկրի նույն բնագավառի նմուշի հետ:
- Հետազոտում է, թե ինչ նմանություն և տարբերություն կա Վրաստանի տարբեր անկյունների արվեստի նմուշների միջև (ճարտարապետություն, որմնանկարչություն և այլն):

Կերպ.կիր. IX.8. Աշակերտը հետազոտում է արվեստի դերը հասարակության կյանքում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը՝

- Դատում է իրեն ծանոթ արվեստի գործիչների և հասարակության կյանքում նրանց ներդրման մասին:
- Հավաքում է տեղեկություններ մշակույթի որևէ ներկայացուցչի գործունեության մասին և, հայթայթած նյութի վրա հիմնվելով, կազմում է տուն-թանգարանի նախագիծ:
- Հետազոտում է ստեղծագործողների հաջողության/անհաջողության պատճառները:
- Հետազոտում է, թե ինչպես է ազդում ժամանակակից հաղորդակցական և տեխնոլոգիական միջոցները հասարակության կյանքում արվեստի դերի վրա:

Ծրագրի բովանդակություն

Կերպարվեստի հիմնական տարրերը և սկզբունքները.

Գիծ, գույն, լույս-ստվեր, ֆակտուրա, ձև, ծավալ, ամբողջություն, համամասնություններ, տարածություն, դիտակետ, համաչափություն, ռիթմ, հավասարակշռություն, հակադրություն, (տրամադրության, զուգորդությունների, հույզերի հաղորդում տարբեր էֆեկտների միջոցով):

Երաշխավորված տեսողական նյութ.

Իերոնիմուս Բոսխ, Անրի Ռուսո, Միխայիլ Վրուբել, Օդիլոն Ռեդոն, Մարկ Շագալ, Էդվարդ Մունկ, Ջեյմս Էնսոր, Սալվադոր Դալի, Ռենե Մագրիտ, Ջորջո դե Կիրիկո,

Մաքս Էրնստ, Հանս Արպի (երևակայական աշխարհ), Ռաուլ Դյուֆ (օր., «Ազդագրերը Տրուվիլում», «Ռեգատա Հենլիշ», «Նվագախումբ», «Զիարշավ Էսկոտում», «Խաղատուն Նիցցայում»), Լադո Գուդիաշվիլի (ոճավորված աշխատանք):

Վրացական թատրոնի նկարչություն՝ Իրակլի Գամրեկելի, Պետրե Օցխելի, Լադո Գուդիաշվիլի, Էլենե Ախվլեդիանի, Կիրիլե Ջոաննիչ, Սոլիկո Վիրսալաձե և այլն:

Նյութ և գործիք.

Տուշ, մատիտ, կավճաներկ, գուաշ, ջրաներկ, տեմպեր, ածուխ, գունավոր թուղթ, ստվարաթուղթ, կավ, գործվածք, թել, պարան, մետաղալար, մետաղյա, պլաստամասսայե տուփեր, բնական և արհեստական նյութ, փորձեր տարբեր նյութերով, ատաղձագործական, բրուտագործական, գործելու, կարելու գործիք:

Տեխնիկա և ընթացակարգ.

Գեղանկարչության, գրաֆիկայի տարբեր տեխնիկա, դրոշմահետք, ծեփում, կոլաժ, կարպետ, թաղիք, գոբելեն, ձեռագործ, համակարգչային տեխնոլոգիաներ:

Փորձեր ընտրված ոլորտում (նկարչություն, դիզայն, լուսանկարչություն):

Գաղափարների արտահայտում.

Գաղափարների աղբյուրներ. հայտնի նկարիչների աշխատանքներ, գեղարվեստական գրականություն, տպավորություններ, զուգորդություններ, երևակայություն:

Ենթադրյալ թեմաներ.

«Վրացական զարդանախշի մոտիվներ», «Պատմական և լեզենդար հերոսներ», «Հայրենիք», «Հերոսություն», «Խմբային դիմանկար», ազատ թեմաներ, թեմաներ տարբեր առարկաներից անցած նյութից:

Աշխատանքային գործունեություն.

Գույքի նորոգում, դասասենյակի նորոգում-դասավորում, դեկորատիվ և կիրառական առարկաներ, մանրակերտեր թատերական ներկայացման համար, ռեկվիզիտ (հագուստի և դեկորացիայի դետալներ), ինտերիերի, հագուստի, գույքի, տարբեր առարկաների էսքիզներ, շնորհավորագրեր և հրավիրատոմսեր, հանդեսների և թատերական ներկայացումների ազդ, պարզ էլեկտրախաղալիք:

Հաղորդակցություն.

Աշխատանքի ներկայացում, գնահատման չափանիշերի ընտրություն, վերլուծություն:

Զրույց աշխատանքից ստացած տպավորությունների և տեղեկության մասին:

Արվեստի ընկալում համատեքստում.

Տարբեր մշակույթների/պատմական ժամանակաշրջանների արվեստի նմուշների համեմատության (ոճ, թեմա, ժանր և այլն) համաձայն, նկարչի անհատական աշխատածն, պատմական ժամանակաշրջանի, երևույթների ներգործությունը արվեստի նմուշների վրա, Վրաստանի տարբեր անկյունների արվեստ, ժողովրդական ստեղծագործություն. արվեստի գործիչների, մշակույթի հետ կապված հաստատությունների դերի հետազոտում հասարակական կյանքում:

Միջնադարյան վրացական ոսկերչություն (օր., *Անչխախատիի, Խախուլի սրբապատկեր, Լակլակիսձենների Աստվածածնի սրբապատկեր*), *Գուջի Ամաշուկելիի ոսկերչական զարդեր:*

Ճարտարապետական դեկոր (*Բոլնիսի Սիոնի, Մցխեթայի Ջվարի, Սամթավիսի, Նիկործմինդա և այլն*):

Կիրառական արվեստ. *Արտ-Դեկորի և Արտ-Նուվոյի ոճի զարդեր, գործվածքեղեն, գորելեններ (օր., Ռատուլ Դիուֆ), Մ.Ս. Կուզնեցովի սպասք, Ֆաբերժեի ոսկերչական զարդեր, Ռենե Լալիկի ապակե իրեր:*